2026, ՀՈՒԼԻՍ Ա, ԹԻՎ 13 (705)

Էջմիածին

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց



Հուլիսի 10-ին

ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի ուխտավորներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի Մասաչուսեթս նահանգի Ուստրի Սուրբ Փրկիչ եկեղեցու համայնքի ուխտավորներին՝ առաջնորդությամբ հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Թադեոս քահանա Բարսեղյանի:

Հայոց Հովվապետն իր հայրական սերն ու օրհնությունը փոխանցեց ուխտավորներին՝ ուրախություն հայտնելով հայրենիք և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին նրանց այցի առիթով և կարևորելով սփյուռքի հայորդյաց զորակցությունն իրենց հայրենաբնակ քույրերին ու եղբայրներին՝ Հայաստանի համար այս դժվարին ժամանակաշրջանում:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ թեև սփյուռքում ապրող հայորդիներն իրենց սրտերում մշտապես կրում են հայրենիքի սերը և հետևում երկրում տեղի ունեցող զարգացումներին, սակայն նման այցելությունները հնարավորություն են ընձեռում անմիջականորեն հաղորդ դառնալու իրենց հոգևոր ու ազգային ժառանգությանը, հայրենի սրբություններին, ինչպես նաև առ աչք տեսնելու ներկա իրողություններն ու ամբողջական պատկերացում կազմելու երկրի առջև ծառացած մարտահրավերների մասին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն հայտնեց, որ հայրենիքից ստացած տպավորություններն ու հոգևոր ապրումները նոր ներշնչանք կհաղորդեն ուխտավորներին՝ իրենց համայնք վերադառնալուց հետո առավել նվիրումով ծառայելու Հայոց Եկեղեցուն ու հայրենիքին, գործուն մասնակցություն բերելու ազգային-եկեղեցական կյանքին և ամուր պահելու կապը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց նաև ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին Եկեղեցի-իշխանություն հարաբերություններին և Եկեղեցու առաքելության առավել արդյունավետ իրագործմանն արդի ժամանակներում:



Հուլիսի 14-ին

Հայագիտական դասընթացներին մասնակից սփյուռքահայ երիտասարդներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեկնարկած հայագիտական և կրոնագիտական դասընթացների առիթով սփյուռքի տարբեր թեմերից ժամանած շուրջ 30 երիտասարդների:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ արդեն երկրորդ տարին իրականացվող դասընթացների նպատակն է զորացնել երիտասարդների հայոց լեզվի և պատմության իմացությունը, հարստացնել նրանց հոգևոր գիտելիքները, ինչպես նաև հաղորդակից դարձնել հայրենիքի հոգևոր-մշակութային ժառանգությանն ու ազգային արժեքներին: Ծրագրի շրջանակներում հայորդիների համար կազմակերպվում են նաև մշակութային միջոցառումներ և ուխտագնացություններ դեպի Հայաստանի տարբեր սրբավայրեր:

Ծրագիրը համակարգում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի Եկեղեցականաց և երիտասարդաց վերապատրաստման ծրագրի փոխտնօրեն Հոգեշնորհ Տ. Շնորհք աբեղա Սարգսյանը: Ծրագրին կազմակերպչական հարցերում իրենց օգտակարությունն են բերում նաև Ղազարավանի միաբնակները:

Իր խոսքում Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց տարբեր երկրներից ժամանած հայորդիների՝ Սուրբ Էջմիածնում համախմբման առիթով և հետաքրքրվեց նրանց առօրյայով և ուսումնառության ընթացքով:

Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ նման կրթական ծրագրերը նպատակաուղղված են սփյուռքահայ երիտասարդների հայեցի դաստիարակության ու կրթության ապահովմանը, ազգային և հոգևոր ինքնության զորացմանը, ինչպես նաև Եկեղեցու և հայրենիքի հետ կապի առավել ամրապնդմանը: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց հայորդիներին ձեռք բերած գիտելիքները ծառայեցնել իրենց աշխարհասփյուռ համայնքների ու ազգային-եկեղեցական կյանքի զորացմանը:

Պայծառակերպության տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Հուլիսի 12-ին Քրիստոսի Պայծառակերպության տոնի առիթով Էջմիածնի Մայր Տաճարում Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվել է տոնական պատարագ: Պատարագիչ Գարեգին վարդապետ Համբարձումյանն իր քարոզախոսության ժամանակ անդրադարձել է Թաբոր լեռան վրա աշակերտներին Քրիստոսի աստվածային փառքով երևալու հիշատակությանը՝ նշելով, որ ամեն օրը կարող է փոխակերպվելու հնարավորություն տալ:



Արարողության ավարտին Հայոց Հայրապետը Պայծառակերպության տոնի առիթով օրհնել է ժողովրդին:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Իգնատիոս վարդապետ Մալխասյանը, ազատվելով Սուրբ Գայանե վանքում ստանձնած պարտականություններից, նշանակվել է Խոր Վիրապ վանքի վանահայր:

Հոգեշնորհ Տ. Հովհաննես աբեղա Թորգոմյանը, ազատվելով Մայր Աթոռի «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի հոգևոր տեսչի պարտականություններից, ուսումնառության է կոչվել Շվեյցարիայի Բոսսե վանքում:

Արժանապատիվ Տ. Գառնիկ քահանա Ավոյանը և Տ. Դավիթ քահանա Իգիթյանը ծառայության են նշանակվել Բուլղարիայի հայոց թեմում:


Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Աշխարհի տառապանքը և Քրիստոսի պայծառակերպությունը
կամ՝ Քրիստոսի տառապանքը և աշխարհի այլակերպությունը

Պայծառակերպության տոնը, որ Վարդավառ ենք նաև կոչում, եկեղեցական ամենախորհրդավոր տոներից է՝ հիմնված Քրիստոսի պայծառակերպման պատմական իրադարձության վրա (Մատթ. 17:1–8, Մարկ. 9:2–8, Ղուկ. 9:28–36), որ էական կարևորություն ունի մեր փրկության համար: Եթե նայենք այսօրվա կյանքին, ամենուրեք կտեսնենք տառապանք, և միշտ մեր մեջ մարդկային մի պարզ հարց է առաջանում՝ Աստված ինչո՞ւ է թողնում այս տառապանքը: Խնդիրն այն է, որ Աստված այս հարցին պատասխանում է Իր կյանքով ու գործով՝ մասնավորապես Իր սիրով և մեր տառապանքին մասնակցությամբ: Տառապանքն ու չարիքը ոչ միայն խնդիր են, այլև խորհուրդ. խնդիրը հասանելի է մեր գիտակցությանը, բայց խորհուրդը հասկանալու համար պետք է անցնենք տառապանքի ճանապարհ: Եվ դա է պատճառը, որ Խաչելությունը խորհուրդ է, և Խաչելությունը Աստծո մասնակցությունն է մարդկային տառապանքին՝ հանուն մարդու փրկության:

Թաբոր լեռան վրա ուրվագծվեց այն գեղեցկությունը, որ պիտի փրկեր աշխարհը, բայց այդ գեղեցկությունը զուտ արտաքին պատկեր չէ. այդ գեղեցկության ներսում մարդկային կյանքի տառապանքն է, որ վերջում պսակվում է լուսապայծառ իրականությամբ: Թաբոր լեռան վրա իրականում հայտնվեց այն նոր երկիրը, որի մասին խոսում է Հայտնության գիրքը (Հայտ. 21:1–4), և որը սպասում է մեզ ապագայում՝ Քրիստոսի երկրորդ գալստյանը և համընդհանուր հարությունից հետո (Ա Կորնթ. 15:20–22): Թաբոր լեռան վրա Քրիստոս պայծառակերպվում է (հունարեն բառը այլակերպվելն է), այսինքն՝ դառնում է ուրիշ, կերպարանափոխվում է, բայց ոչ հունական հեթանոսական փոխակերպության (մետամորֆոզ) իմաստով, այլ լույս են շողարձակում և՛ դեմքը, և՛ հագուստները (Մատթ. 17:2), և լույսը տարածվում է ամբողջ շրջակայքում՝ այդ թվում առաքյալների վրա (Մատթ. 17:6, Ղուկ. 9:34):

Եկեղեցական հայրերի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ սա զուտ նյութական լույսի մասին չէ, այլև աննյութական, աստվածային լույսի, որն աշակերտները կարողանում են տեսնել ու զգալ այն չափով, որքան աստվածային շնորհը թույլ է տալիս: Այս պատմությունից կարող ենք հասկանալ մի քանի կարևոր իրողություն:


Կարլ Բլոխ. Հիսուսի պայծառակեպությունը , 1800 թ.

1. Սուրբ Երրորդության հայտնությունը: Ինչպես մկրտության դրվագում, պայծառակերպության դրվագում ևս տեղի է ունենում Սուրբ Երրորդության հայտնություն. մկրտության դրվագում տեսանելի նշանը բացված երկինքն էր, Հայր Աստծո ձայնը և Սուրբ Հոգին՝ աղավնու կերպարանքով (Մատթ. 3:16–17, Մարկ. 1:10–11, Ղուկ. 3:21–22): Պայծառակերպության դրվագում տեսանելի նշանը լուսավոր ամպն է, որը խորհրդանշում է Սուրբ Հոգուն (Ղուկ. 9:34–35], և դարձյալ լսվում է Հայր Աստծո ձայնը՝ ուղղված առաքյալներին. «Սա է Որդին Իմ սիրելի. Սրան լսե՛ք» (Ղուկ. 9:35): Այսպիսով՝ դարձյալ Հայր Աստծո ձայնը վկայում է Հիսուսի պայծառակերպված աստվածային Որդիության մասին (Մարկ. 9:7):

2. Քրիստոսաբանական հայտնություն: Այստեղ բացահայտվում է, թե ով է Հիսուս Քրիստոսը: Աշակերտները մինչև պայծառակերպությունը տեսնում էին Հիսուսի՝ Իր մարդկային ողջ կարողությամբ, բայց լեռան վրա՝ Իր աստվածային փառքով (Հովհ. 1:14): Հիսուսը շարունակում է երևալ որպես մարդ, պարզապես Նրա մարդկային մարմինն այնքան թափանցիկ է դառնում, որ աստվածային լույսը, որ Նա ի սկզբանե ուներ, տեսանելի է դառնում աշակերտների համար (Կողոս. 2:9):

3. Մարդաբանական հայտնություն: Այստեղ մենք տեսնում ենք, որ այլակերպվում է Հիսուսի մարդկային մարմինը, և սա վերաբերում է մեզ, որովհետև եկեղեցական հայրերից ոմանք ասում են, որ պայծառակերպությունն աշակերտների համար էր, Հիսուսը մնում է նույնը, ինչպես որ կա՝ երեկ, այսօր և հավիտյան (Եբր. 13:8): Թաբոր լեռան վրա ոչ միայն երևում է այն, ինչ որ Աստված է, այլ նաև հավասարապես բացահայտվում է այն, ինչ մենք պիտի դառնանք (Ա Կորնթ. 15:49):

4. Տիեզերքի արարչագործության փառքը: Ոչ միայն մարդն է կոչված այլակերպվելու, այլ նաև մեզ շրջապատող աշխարհը, որովհետև ոչ միայն Քրիստոսի մարմինն այլակերպվեց, այլ նաև այն ամենը, ինչ կապված էր Նրա հետ, օրինակ՝ հագուստները (Մարկ. 9:3) և ամբողջ Թաբոր լեռան շրջակայքը (Ղուկ. 9:29): Այս ամենը կարելի է վերնագրել այսպես՝ «Քրիստոսի այլակերպությունը և աշխարհի տառապանքը» կամ՝ «Քրիստոսի տառապանքը և աշխարհի այլակերպությունը»: Հիսուսը չբարձրացավ լեռը՝ աշակերտներին պարզապես ցույց տալու, թե ինչպես են կերպարանափոխվում: Այլակերպության հրաշքն ինքնանպատակ չէր. այն հայտնություն էր: Պայծառակերպությունից առաջ Հիսուս արդեն աշակերտներին հայտնում էր Իր մոտալուտ չարչարանքների մասին (Մատթ. 16:21) և արժանանում հանդիմանության. Նա ոչ միայն կշտամբեց Պետրոսին (Մատթ. 16:23), այլև ցույց տվեց, որ այս ճակատագիրն սպասում է բոլոր նրանց, ովքեր Իր հետևորդներն են (Ղուկ. 9:23): Ապա Թաբոր լեռան վրա՝ զմայլանքի վիճակում, Պետրոսն ասում է. «Վարդապե՛տ, լավ է, որ այստեղ մնանք. եկե՛ք երեք տաղավար սարքենք՝ մեկը Քեզ համար, մեկը՝ Մովսեսի, մյուսը՝ Եղիայի» (Մարկ. 9:5): Եվ աստվածային ձայնն ասում է. «Սա է Որդին Իմ սիրելի. Սրան լսե՛ք» (Ղուկ. 9:35): Թաբոր լեռան վրա արդեն ուրվագծվում է Գողգոթան, ուրվագծվում է խաչի պատկերը: Հետևապես՝ այլակերպությունը տանում է դեպի խաչելություն, խաչելությունը՝ հարություն (Հռոմ. 6:5): Սա է մեր հույսը, սա է մեր ճանապարհը:

Թաբորի և Գողգոթայի կապը երևում է նաև նրանով, որ այն աշակերտները, որոնք ներկա էին պայծառակերպությանը և Քրիստոսին տեսնում էին փառավորված, այդ նույն երեք աշակերտները՝ երբ Քրիստոսը տագնապի մեջ էր (Մատթ. 26:37): Մի տեղում տեսնում են փառավորված Հիսուսի, մյուսում՝ տագնապած Քրիստոսի. երկու դեպքում էլ կերպարանափոխություն է, այլակերպություն:

Աշակերտները տեսնում են Մովսեսին և Եղիային՝ Հին Կտակարանի երկու նշանավոր կերպարներին, որոնցից մեկը խորհրդանշում է օրենքը, մյուսը՝ մարգարեությունները (Մատթ. 17:3): Ղուկաս Ավետարանիչը ներկայացնում է այս զրույցի բովանդակությունը՝ ասելով, որ խոսում էին Երուսաղեմում կատարվելիք խաչելության մասին (Ղուկ. 9:31): Այսինքն՝ խոսում էին այն մասին, ինչ արդեն գրված էր Օրենքում և Մարգարեներում (Ղուկ. 24.27): Սա էլ կարող էր Պետրոսի դիմադրության պատճառը լինել: Եվ պատահական չէ, որ պայծառակերպությունը նաև մտածողությունը փոխելն է. «Իրեն լսե՛ք» (Մարկ. 9:7): Այսինքն՝ թողնե՛ք մարդկային պատկերացումները Փրկչի մասին և լսե՛ք Նրան: Ուրեմն՝ այլակերպությունը ոչ միայն կյանքի, այլ նաև մտածողության այլակերպություն է:

Այսպիսով՝ մեզ՝ քրիստոնյաներիս համար, Այլակերպության կամ Վարդավառի տոնը մի կողմից հիշատակումն է պատմական իրադարձության (Մատթ. 17:1–8), մյուս կողմից՝ ապագա մեր կյանքի հույսի (Հռոմ. 8:18): Այն մի կողմից խորհրդանշում է մկրտության խորհուրդը (Հռոմ. 6:3–4), մյուս կողմից՝ խաչելության (Ղուկ. 9:23), երրորդ կողմից՝ հարության (Ա Կորնթ. 15:20): Թաբոր – Գողգոթա – Հարության լեռ: Հիսուսի կյանքում լեռը կարևոր տեղ է ունեցել. լեռը Աստծո հետ մտերմիկ զրույցի միջավայրն էր, և Ղուկաս Ավետարանիչը նշում է, որ պայծառակերպությունը տեղի ունեցավ աղոթքի ժամանակ (Ղուկ. 9:29):

Այս լույսի ներքո միմյանց ջրելու ավանդությունը նույնպես ստանում է իր խորհուրդը՝ որպես հոգու մաքրագործման և Նոյի ջրհեղեղից փրկության խորհրդանիշ (Ծննդ. 8:11), որը կապվում է Քրիստոսի մկրտության և նոր կյանքի հետ (Ա Պետ. 3:20–21):

Ալբերտ սրկ. ՍԱՀԱԿՅԱՆ
Արմեն ՍԱՀԱԿՅԱՆ

Պողոս առաքյալի կերպարանափոխությունը.
Դամասկոսի ճանապարհից մինչև Հռոմի բանտեր

Քրիստոնեական Եկեղեցու պատմության և աստվածաբանական մտքի ձևավորման ակունքներում չկա ավելի ազդեցիկ, հակասական և միևնույն ժամանակ հանճարեղ կերպար, քան Սավուղը, որը հետագայում վերանվանվեց և մնաց քրիստոնեության մեջ որպես Պողոս առաքյալ: Նրա կյանքի ուղին դասական իմաստով պատմական բարեշրջության (էվոլյուցիա) կամ պարզ հայեցողական փոփոխության արդյունք չէ. այն արմատական, հեղաշրջող և գոյաբանական կերպարանափոխություն է, որը ոչ միայն մեկ անհատի ճակատագիր փոխեց, այլև կանխորոշեց համաշխարհային պատմության ընթացքը:

Սավուղը՝ որպես օրենքի նախանձախնդիր փարիսեցի, քրիստոնեական համայնքի մեջ տեսնում էր հուդայական միակրոնության (մոնոթեիզմ) ամենավտանգավոր՝ հերետիկոսական ճյուղավորումը, որն անհրաժեշտ էր արմատախիլ անել: Սակայն Դամասկոսի ճանապարհին տեղի ունեցավ միստիկ պատահարը, որի արդյունքում հալածիչ Սողոսը վերածվեց քրիստոնեության ամենամեծ ջատագովի և «հեթանոսաց առաքյալի»:

Սույն հոդվածի նպատակն է պատմաքննական և աստվածաբանական մեթոդների համադրությամբ դիտարկել Սավուղ-Պողոս կերպարանափոխության ընթացքը, նրա առաքելական ճանապարհորդությունների աշխարհաքաղաքական համատեքստը և վերլուծել, թե ինչպես նրա թղթերը (նամակները) հիմնավորեցին քրիստոնեական համակարգված աստվածաբանության առանցքային դրույթները:

1. Տարսոնացի Սավուղը. պատմամշակութային և կրոնական ինքնությունը

Պողոսի ֆենոմենը հասկանալու համար առաջնահերթ պետք է դիտարկել նրա եռաշերտ ինքնությունը, որի ազդեցությամբ նա միջամուխ եղավ նոր կրոնի տիեզերականացմանը: Նա ծնվել էր Կիլիկիայի Տարսոն քաղաքում, որն այդ շրջանի հելլենիստական մշակույթի, փիլիսոփայության (հատկապես ստոիկյան դպրոցի) և առևտրի խոշոր կենտրոններից էր:

• *Հուդայական արմատները:* Սավուղը Բենիամինի ցեղից էր, «եբրայեցի՝ եբրայեցիներից, ըստ օրենքի՝ փարիսեցի» (Փիլիպ. 3:5): Նա կրթություն էր ստացել Երուսաղեմում՝ ժամանակի ամենահեղինակավոր օրենսգետ Գամաղիելի մոտ, տիրապետում էր հրեական աստվածաբանության սուրբգրային նրբություններին, թալմուդյան մեկնաբանական արվեստին (էկզեգետիկա) և օրենքի տառի կատարյալ պահպանմանը: ➥ էջ 4


Պիետրո դե Կորտոնա. Անանիասը վերականգնում է Սուրբ Պողոսի տեսողությունը, 1631 թ.

Քրիստոսի լռությունը Պիղատոսի առջև.
ճշմարտության և իշխանության բախումը

Աղմուկի, տեղեկատվական անդադար հեղեղների և մակերեսային հաղորդակցության ժամանակակից այս դարաշրջանում լռությունը հաճախ բացասական լույսի ներքո է ընկալվում՝ որպես դատարկություն, անզորություն կամ պատասխանի բացակայություն, սակայն մարդկային գոյության, փիլիսոփայական մտքի և մասնավորապես քրիստոնեական աստվածաբանության խորքում լռությունը բացարձակապես դրական, արարող ու կենսունակ իրողություն է: Այն ոչ թե հաղորդակցության ավարտն է, այլ դրա ամենախոր, անմիջական ու սրբագործված ձևը, որտեղ բառերը գոյության բացարձակությանն են զիջում իրենց տեղը: Լռությունն իր էությամբ այն հոգևոր հայելին է, որը մարդուն առիթ է տալիս իմաստնանալու: Երբ լռում են արտաքին ձայները, մարդկային միտքն ազատագրվում է ձևական ու կաղապարված պատասխաններից, որոնք հաճախ սահմանափակում են ճշմարտության ընկալումը հենց այդ բառերի նեղ շրջանակում: Լռությունը մարդուն պարգևում է ներանձնական ընդարձակ տարածություն՝ խորհելու, փնտրելու և սեփական խղճի ու Արարչի հետ դեմ հանդիման կանգնելու համար: Այն ակնարկում է ակնհայտ, բացահայտված ճշմարտությունների մասին, որոնք կարիք չունեն երկրային հռետորաբանության կամ ապացույցների, քանի որ դրանք ինքնաբավ են և խոսում են հենց իրենց էությամբ:

Աստվածաբանական և դավանաբանական հարթության մեջ լռությունն ունի նախախնամական ու փրկագործական առանցքային նշանակություն: Այն կարծրատիպը, թե երկնքի լռությունը Աստծուց անտեսում կամ լքվածություն է, մարդկային կյանքի մեծագույն թյուրըմբռնումներից է: Իրականում աստվածային լռությունը Նրա ներկայության և սիրո ամենախորհրդավոր դրսևորումն է, որը հասունացնում է մեր հավատքը և սովորեցնում վստահել Նրան նույնիսկ այն ժամանակ, երբ Նրա ձայնը չի լսվում: Աստված երբեք չի լռում անտարբերությամբ. Նրա լռությունը հաճախ Նրա՝ արդեն իսկ ասած և Աստվածաշնչում արձանագրված հավիտենական խոսքի արձագանքն է մեր հոգիներում: Ահա այս հոգևոր ու փիլիսոփայական համատեքստում է, որ Երուսաղեմի դատարանում տեղի ունեցած իրադարձությունը՝ Քրիստոսի լռությունը Պիղատոսի առջև, ստանում է իր տիեզերական, շրջադարձային նշանակությունը:

Աշխարհում եղել ու շարունակում են ծնունդ առնել կենսունակ ու շրջադարձային բազում դիպվածներ, որոնց հետևում իրականում կանգնած են երկու կամ երեք անձինք, հզորագույն դեմքեր և մտածողներ, սակայն համայն մարդկության փրկագործ պատմության մեջ ամենադրամատիկ և խորախորհուրդ երկխոսությունը տեղի է ունեցել հենց Երուսաղեմի դատարանում, որտեղ դեմ հանդիման կանգնեցին երկրային հզորության կայսերական ներկայացուցիչը՝ Պոնտացի Պիղատոսը, և տիեզերքի Արարիչն ու մարմնացյալ Ճշմարտությունը՝ Հիսուս Քրիստոս: Այս դրվագը սոսկ պատմական և, որ ավելի դիպուկ է ասված, հերթական դատավարություն չէր. այն աշխարհիկ-բռնի իշխանության և աստվածային-հոգևոր հայտնության բախման գագաթնակետն էր: Այս բախման կենտրոնում Պիղատոսի թերահավատ հարցն է և Քրիստոսի խորհրդավոր, բայց միևնույն ժամանակ ամենախոս ու հնչեղ լռությունը: Այս լռությունը, սակայն, դատարկություն կամ անզորություն չէր, այլ հոգևոր այնպիսի լեցունություն, որն ամփոփում էր դարերի պատմությունն ու մարդկային գոյության ողջ իմաստը: Երբ երկրային դատավորը՝ զրահապատված հռոմեական լեգեոնների ուժով և կայսերական իրավունքով, փորձում էր հարցաքննել Իր առջև կանգնած «մեղադրյալին», նա չէր գիտակցում, որ իրականում ինքն է կանգնած հավիտենականության դատաստանի առաջ: Պիղատոսը ներկայացնում էր մի աշխարհ, որտեղ ճշմարտությունը չափվում է ազդեցությամբ, զենքի զորությամբ և քաղաքական նպատակահարմարությամբ, մինչդեռ Քրիստոսի լուռ ներկայությունը վկայում էր մի թագավորության մասին, որն այս աշխարհից չէ (հմմտ. Հովհ. ԺԸ 36):



Անտոնիո Չիզերի. Պիղատոս Պոնտացին Հիսուսին ներկայացնում է ամբոխի դատին, 1871 թ.

Ուստի՝ Երուսաղեմի դատարանում տեղի ունեցածը վերածվում է տիեզերական մի հայելու, որտեղ երկրային ժամանակավոր իշխանությունը բախվում է աստվածային հավերժական ճշմարտությանը: Քրիստոսի հնչեղ լռությունը ճեղքում է մարդկային մեծամտության պատնեշները՝ Պիղատոսին և նրա օրինակով ողջ մարդկությանը կանգնեցնելով գոյաբանական մի այնպիսի հարցադրման առջև, որի պատասխանը ոչ թե բառերի հյուսվածքի, այլ սրտի խորքային փոխակերպման մեջ է: Սա մի դատավարություն էր, որտեղ Դատապարտվողի լռությամբ ազատագրվում էր Նրան իսկ դատող աշխարհը:

«Ինչ է ճշմարտությունը» հարցի փիլիսոփայական և դավանաբանական վերլուծության համեստ փորձ

Երբ Հիսուս հայտարարում է. «Ես ծնվել, աշխարհ եմ եկել, որ վկայեմ ճշմարտության մասին» (Հովհ. ԺԸ 37), Պիղատոսը պատասխանում է Աստվածաշնչից մեզ հայտնի իր հեգնական հարցով. «Ինչ է ճշմարտությունը» (Հովհ. ԺԸ 38):

Պիղատոսի հարցն արտահայտում է հռոմեական (հելլենիստական) աշխարհի թերահավատությունը: Եթե ուղղակի պատկերացնենք մարդկային տեսակը, բնույթը, գործունեության կերպն ու իմաստը, ապա պետք է ասենք, որ Պիղատոսի համար՝ որպես քաղաքական գործչի, ճշմարտությունը հարաբերական էր, ճկուն և ամենակարևորը՝ ենթակա կայսրության շահերին: Իշխանությունն ինքնին սահմանում էր, թե ինչն է ճշմարիտ տվյալ պահին: Պիղատոսի հարցադրմամբ հայտնվում է փիլիսոփայական այն մեծագույն պարադոքսը, որն ուղեկցում է մարդկային մտքին իր ողջ պատմության ընթացքում. *ցանկացած բառային սահմանում ոչ միայն բացատրում, այլև սահմանափակում է ճշմարտությունը:* Բառերով տրված պատասխանը հաճախ մարդու միտքը կաշկանդում է հենց այդ բառերի նեղ շրջանակի ու մարդկային լեզվի անկատարության մեջ: Լեզուն, լինելով երկրային գործիք, ի զորու չէ իր մեջ տեղավորելու Բացարձակն ու Անհունը: Այս իմաստով՝ Քրիստոսի լռությունը Պիղատոսի առջև դառնում է բարձրագույն հայտնություն: Քրիստոս չի պատասխանում բառերով, որովհետև Բացարձակ Ճշմարտությունը ոչ թե իմացական տեղեկություն է, որը պետք է հաղորդել, այլ Գոյություն, որին պետք է հաղորդակից դառնալ:

Այդ լռությունը Պիղատոսին (և յուրաքանչյուր մտածող մարդու) ազատ տարածություն է ընձեռում՝ իմաստնանալու, խորհելու և ներանձնական փնտրտուքներով ինքնաճանաչողության հասնելու: Լռելով՝ Քրիստոս Պիղատոսից վերցնում է հեշտ ձևակերպված պատասխանների հենարանը և նրան ստիպում կանգնել սեփական էության դատարկության առջև: Աստվածային լռությունը ոչ թե պատասխանի բացակայություն է, այլ պատասխանի այնպիսի գերառատություն, որը հնարավոր չէ տեղավորել մարդկային տրամաբանության սահմաններում: Ճշմարտությունն այդժամ չխոսեց բառերով, որովհետև Նրա լռությունն ինքնին հայելի էր, որն արտացոլում էր իշխանության սնանկությունը Գոյության բացարձակության հանդեպ:

Քրիստոնեական դավանաբանության մեջ ճշմարտությունը ոչ թե գաղափար է կամ վերացական հասկացություն, այլ *Անձ*: Հիսուս արդեն իսկ հայտնել էր Իր աշակերտներին. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը» (Հովհ. ԺԴ 6):

Պիղատոսի ողբերգությունն այն էր, որ նա հարցնում էր՝ «Ինչ է ճշմարտությունը», երբ Ճշմարտությունը՝ որպես «Ով», կանգնած էր հենց իր աչքերի առջև: Քրիստոսի լռությունն այս հարցին պատասխան էր՝ Ճշմարտությունը կարիք չունի սահմանվելու բառերով, երբ Նա հայտնված է Իր էությամբ, այլ կերպ ասած՝ Աստվածային ճշմարտությունն ինքնաբավ է, այն կարիք չունի երկրային դատավորի վավերացման կամ մարդկային տրամաբանության արդարացման: Այս դավանաբանական իրողությունը բացահայտում է քրիստոնեական հայտնության ամենախորհրդավոր պարադոքսներից մեկը. Դատավորը նստած է դատվողի աթոռին, և Օրենսդիրն է ենթարկվում երկրային անօրեն դատաստանին:

Պիղատոսը կարծելով, թե իր ձեռքում է գտնվում Նազովրեցու կյանքի ու մահվան տնօրինումը, իրականում փորձում էր քննել մի էություն, որն Իր մեջ ներփակում է ողջ տիեզերքի կյանքն ու գոյությունը: Ճշմարտության ինքնաբավությունն այստեղ հանդես է գալիս Իր ամբողջ աստվածային վեհությամբ. այն չի տրոհվում հակաճառություններից, չի փորձում համոզել կամ ապացուցել սեփական իրավացիությունը, քանի որ լույսը կարիք չունի ապացուցելու, որ ինքը լույս է. այն պարզապես ճառագում է:

Այս համատեքստում Քրիստոսի լռությունը դառնում է դավանաբանական մի հայտարարություն, որը հստակ սահմանագիծ է քաշում մարդու կողմից ստեղծված հարաբերական գաղափարների և Աստծո կողմից հայտնված բացարձակ իրականության միջև: Ուստի, երբ Ճշմարտությունը հրաժարվում է պատասխանել աշխարհիկ հարցադրումներին, Նա ցույց է տալիս, որ աստվածայինը չի կարող կաղապարվել երկրային մտածողության ձևերի մեջ: Սա լռություն էր, որը ոչ թե թաքցնում էր ճշմարտությունը, այլ պահպանում էր դրա սրբությունն ու անհասանելիությունը նրանց համար, ովքեր փնտրում էին լոկ բառեր՝ իրենց սեփական մեղքերն ու քաղաքական համաձայնություններն արդարացնելու համար:

Լռության աստվածաբանություն

Քրիստոսի լռությունը Պիղատոսի (և ավելի վաղ՝ Կայիափայի ու Հերովդեսի) առջև ոչ թե տկարության, այլ բացարձակ հոգևոր իշխանության և կատարյալ իմաստության դրսևորում էր: Սա, կարելի է ասել լռության աստվածաբանության փառահեղ օրինակ է և ինչու չէ՝ նաև մարգարեության լրում. «Նա չարչարվեց ու նեղություն քաշեց, բայց Իր բերանը չբացեց. ինչպես ոչխար՝ մորթվելու տարվեց, և ինչպես մաքի՝ Իր խուզողների առաջ մունջ է, այնպես Իր բերանը չբացեց» (Եսայի ԾԳ 7): Այս մարգարեական կանխասացությունը, որը դարեր առաջ մատնանշում էր Տառապող Ծառայի կերպարը, Երուսաղեմի դատարանում ստանում է իր տեսանելի և պատմական մարմնավորումը: Քրիստոսի լռությունն այստեղ դադարում է լինել պասիվ վիճակ. այն վերածվում է ակտիվ, գիտակցված և փրկագործական հնազանդության (հմմտ. Փիլիպ. Բ 8): Կայիափայի կրոնական կույր նախանձի, Հերովդեսի դատարկ հետաքրքրասիրության և Պիղատոսի քաղաքական սնապարծության առջև Փրկիչը լռում է, որովհետև այդ ատյաններից և ոչ մեկը չէր փնտրում հոգու ազատագրում: Նրանք փնտրում էին կամ ինքնարդարացում, կամ հրաշք-ներկայացում, կամ իրավական ելքեր:

Վերոնշյալ լռության աստվածաբանությունը մեզ հուշում է, որ Աստծո լռությունը երբեք անտարբերություն կամ բացակայություն չէ, այլ Նրա ներկայության և սիրո ամենախոր ձևը: Լռելով՝ Քրիստոս թույլ է տալիս, որ մարդկային մեղքն ու աշխարհի անարդարությունն իրենց սպառեն Իր անհուն խոնարհության դիմաց: Ի վերջո, Աստված խոսքով ստեղծեց տիեզերքը, սակայն մարդու փրկագործությունը կատարեց լռությամբ ու խաչի զոհաբերությամբ: Այդ լռությունն իր մեջ ամփոփում էր այն ակնհայտ ճշմարտությունը, որը վեր է ամեն տեսակի հռետորաբանությունից. երբ մարդկային բառերն սպառվում են, սկսում է խոսել Աստվածային ներկայությունը, որը մարդուն առիթ է տալիս կանգ առնելու, խորհելու և իմաստնանալու համար:

Հաճախ լռությունը պարունակում է շատ ավելի կենսունակ ու խոր պատասխաններ, քան որևէ խոսք: Երբ Պիղատոսը հպարտորեն ասում է. «Ինձ հետ չե՞ս խոսում. չգիտե՞ս, որ իշխանություն ունեմ քեզ խաչելու և իշխանություն ունեմ քեզ արձակելու», Հիսուս սահմանափակում է Իր խոսքը՝ կարծես ցույց տալով, որ երկրային իշխանությունն է սահմանափակ (Հովհ. ԺԹ 10–11): Իր լռությամբ Նա ակնարկում է ակնհայտ, բացահայտված ճշմարտության մասին, որի համար բառերն այլևս ավելորդ են: Ինչպես նշեցինք, բառերով տրված պատասխանը կարող է սահմանափակել մարդու միտքը հենց այդ բառերի ու պատասխանի նեղ շրջանակում, մինչդեռ լռությունը մարդուն տալիս է հոգևոր ընդարձակ տարածություն՝ իմաստնանալու, խորհելու և փնտրելու համար: Այն ստիպում է հարց տվողին, հայելուն նայելով, տեսնել կամ, ավելի ճիշտ, հանդիպել սեփական խղճին:

Մարդկային կյանքում ամենամեծ հոգևոր ճգնաժամերից մեկն այն է, երբ թվում է, թե Աստված լռում է մեր տառապանքների, աղոթքների կամ աշխարհի անարդարությունների հանդեպ: Մարդկային միտքը հակված է սա ընկալելու որպես անտեսում, լքվածություն կամ անտարբերություն, սակայն սուրբգրային հեռանկարը լիովին այլ է:

Շարունակելի

Հովհաննես սրկ. ԷՎԻՆՅԱՆ
Դիանա ՔՈՉԱՐՅԱՆ

Պողոս առաքյալի կերպարանափոխությունը.
Դամասկոսի ճանապարհից մինչև Հռոմի բանտեր

↩ *էջ 2*

• *Հելլենիստական կրթությունը:* Ի տարբերություն Պաղեստինի տեղացի հրեաների՝ Պողոսը սահուն խոսում և գրում էր հունարեն (կոյնե), ծանոթ էր հունական հռետորությանը, տրամաբանությանը և փոխաբերություններին: Սա թույլ տվեց նրան հետագայում խոսել հեթանոսական աշխարհի հետ իրենց իսկ լեզվով:

• *Հռոմեական քաղաքացիությունը:* Հռոմի քաղաքացիության՝ ի ծնե ունեցած իրավունքը (Գործք 22:28) Պողոսին տալիս էր իրավական անձեռնմխելիություն, ազատ տեղաշարժի հնարավորություն կայսրության ողջ տարածքում և իրավունք՝ բողոքարկելու դատական վճիռները հենց կայսեր առջև:

Այսպիսով՝ Սավուղը կապող օղակ էր երեք մեծ աշխարհների՝ հրեական կրոնի, հունական մտքի և հռոմեական պետականության միջև: Սակայն մինչև դարձի գալը այս ողջ ներուժն ուղղված էր Եկեղեցու ոչնչացմանը: Դրա վառ ապացույցը Ստեփանոս Նախավկայի քարկոծությանը նրա մասնակցությունն էր (Գործք 7:58):

2. Դամասկոսի ճանապարհը. քրիստոսակենտրոն հեղաշրջում

Քրիստոնեության պատմության մեջ դժվար է գտնել ավելի շատ քննարկված դրվագ, քան Սավուղի դարձը Դամասկոսի ճանապարհին (մոտ 34–36 թթ.): «Գործք առաքելոց»-ում այս իրադարձությունը նկարագրվում է երեք անգամ (գլուխներ 9, 22, 26), ինչը վկայում է դրա առանցքային նշանակության մասին:

Պատմությունից հայտնի է, որ Սավուղը գնում էր Դամասկոս՝ տեղի սինագոգներից Հիսուսի հետևորդներին ձերբակալելու և Երուսաղեմ բերելու: Ճանապարհին հանկարծակի հայտնված երկնային լույսը և հնչած ձայնը՝ «Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես հալածում Ինձ» (Գործք 9:4), ամբողջությամբ փոխեցին նրա գիտակցությունը: Սույն իրադարձության աստվածաբանական կողմերն են՝

Ա. Հարուցյալ Քրիստոսի եկեղեցաբանական նույնացումը: Հիսուսը չի հարցնում՝ «Ինչո՞ւ ես հալածում իմ հետևորդներին», այլ ասում է՝ «Ինչո՞ւ ես հալածում Ինձ»: Այս ձևակերպումն ընկած է Պողոսի աստվածաբանական այն մեծ թեզի հիմքում, ըստ որի՝ Եկեղեցին Քրիստոսի Մարմինն է, իսկ Քրիստոսը՝ դրա Գլուխը:

Բ. Կուրություն և վերածնունդ: Երեք օր տևած կուրությունը խորհրդանշում էր Սավուղի հին, փարիսեցիական աշխարհայացքի մահը և Քրիստոսի՝ գերեզմանում գտնվելու եռօրյա խորհուրդը: Անանիայի ձեռնադրությամբ և աչքերից «թեփուկների» ընկնելով՝ ծնվում է նոր մարդը՝ Պողոսը:

Այս փորձառությունը Պողոսի համար սովորական դավանափոխություն չէր. դա հայտնութենական (ապոկալիպտիկ) հանդիպում էր, որը նրան տվեց ուղղակի առաքելական լիազորություն: Նա իրեն համարում էր Տիրոջը տեսած հավասարազոր առաքյալ՝ չնայած չէր եղել Հիսուսի 12 երկրային աշակերտների թվում (Ա Կորնթ. 9:1):

3. «Հեթանոսների առաքյալը». առաքելական ճանապարհորդությունները և քրիստոնեական կրոնի տիեզերականացումը

Դարձից հետո Պողոսն անմիջապես չսկսեց իր մեծ քարոզչությունը: Նա անցկացրեց մոտ երեք տարի Արաբիայի անապատում (Գաղ. 1:17)՝ վերաիմաստավորելով Հին Կտակարանի մարգարեությունները Քրիստոսի հայտնության լույսի ներքո, այնուհետև Անտիոքում համագործակցեց Բառնաբասի հետ:

Պողոսի գործունեության պատմական գագաթնակետը նրա առաքելական երեք մեծ ճանապարհորդությունն էր, որոնք ընդգրկեցին Կիպրոսը, Փոքր Ասիան, Մակեդոնիան և Հունաստանը: Ահա ամփոփ պատկերը:

Առաջին առաքելական ճանապարհորդության (46–48 թթ.) մեկնարկը տրվեց Ասորիքի Անտիոք քաղաքից, որտեղից Սուրբ Հոգու ներշնչմամբ Պողոսն ու Բառնաբասը, կարճ ժամանակով նաև Հովհաննես-Մարկոսի ուղեկցությամբ, ճանապարհ ընկան դեպի Սելևկիայի նավահանգիստ, ապա նավարկեցին Կիպրոս կղզի: Կղզու Պաֆոս քաղաքում Պողոսի կատարած հրաշքի՝ Եղիմաս կախարդի կուրացման շնորհիվ հռոմեացի փոխհյուպատոս Սերգիոս Պողոսը դարձի եկավ, ինչից հետո առաքյալներն անցան Փոքր Ասիայի ներքին շրջաններ՝ Պերգե, Պիսիդյան Անտիոք, Իկոնիոն, Լյուստրա և Դերբե: Լյուստրայում ի ծնե կաղ մարդու բժշկությունից հետո տեղի հեթանոս ամբոխը փորձեց Պողոսին ու Բառնաբասին պաշտել որպես երկնքից իջած աստվածների, սակայն շուտով հրեաների դրդմամբ նույն այդ ժողովուրդը քարկոծեց Պողոսին և մեռած կարծելով՝ նետեց քաղաքից դուրս: Չնայած այս դաժան հալածանքներին՝ առաքյալը կենդանի մնաց, վերադարձավ քաղաք, ամրապնդեց տեղի նորաստեղծ հեթանոսական համայնքները և հաջողությամբ ավարտեց առաջին շրջագայությունը:

Երկրորդ առաքելական ճանապարհորդությունը (49–52 թթ.) սկսվեց Երուսաղեմի պատմական ժողովից հետո, երբ Պողոսը, այս անգամ արդեն Շիղայի, Տիմոթեոսի և Ղուկասի ուղեկցությամբ, Անտիոքից ցամաքային ուղիով անցավ Սիրիան ու Կիլիկիան և հասավ մինչև Տրովադա



Նիկոլայես Պիետերց Բերխեմ. Պողոսն ու Բառնաբասը Լյուստրայում, 1650 թ.

նավահանգիստ: Այստեղ Պողոսը տեսիլքով ստացավ Մակեդոնացու հրավերը, ինչն ազդարարեց Ավետարանի մուտքը Եվրոպա, որտեղ առաջին հանգրվանը Փիլիպպե քաղաքն էր, և որտեղ մկրտվեց Լիդիա անունով ծիրանավաճառ կինը: Փիլիպպեում բանտարկվելուց և գիշերային հրաշալի երկրաշարժով ազատվելուց հետո առաքյալն անցավ Թեսաղոնիկե, Բերիա, ապա հասավ Աթենք, որտեղ Արեոպագոսի հանրահռչակ ճառով հելլենիստական փիլիսոփաներին քարոզեց հարության խորհուրդը: Այս ուղևորության գագաթնակետը եղավ Կորնթոս քաղաքը, որտեղ Պողոսն անցկացրեց մեկուկես տարի, զբաղվեց վրանագործությամբ, հիմնեց հոգևոր խոշոր համայնք և գրեց իր առաջին նամակները՝ թեսաղոնիկեցիներին ուղղված թղթերը:

Երրորդ առաքելական ճանապարհորդությունը (53–57 թթ.) դարձավ նախկինում հիմնադրված եկեղեցիների ամրապնդման և կազմակերպչական մեծ աշխատանքների շրջան, որի գլխավոր հանգրվանը եղավ Փոքր Ասիայի խոշորագույն կենտրոններից մեկը՝ Եփեսոսը: Այս քաղաքում Պողոսը մնաց շուրջ երեք տարի: Վերադարձի ճանապարհին՝ Տրովադայում, նա հարություն տվեց պատուհանից ընկած պատանի Եվտիքոսին, իսկ Միլետոս նավահանգստում հուզիչ հրաժեշտ տվեց Եփեսոսի եկեղեցու երեցներին՝ կանխազգալով իր շղթայումն ու ձերբակալությունը Երուսաղեմում: Այս երրորդ և վերջին ազատ ճանապարհորդության ընթացքում գրվեցին նրա աստվածաբանական մեծագույն գլուխգործոցները՝ գաղատացիներին, կորնթացիներին և հռոմեացիներին ուղղված նամակները, որոնք դարձան քրիստոնեական դավանաբանության անսասան հիմքերը:

Պողոսը կիրառում էր աշխարհաքաղաքական և սոցիալական հստակ ռազմավարություն.

1. Քաղաքային կենտրոնների թիրախավորում: Նա չէր քարոզում գյուղական վայրերում, այլ ընտրում էր կայսրության մեծագույն մետրոպոլիաները՝ Եփեսոս, Կորնթոս, Թեսաղոնիկե, Աթենք: Այս քաղաքներից քրիստոնեությունն ինքնաբերաբար տարածվում էր դեպի ծայրամասեր:

2. Սինագոգներից դեպի Ագորա: Ամեն քաղաքում Պողոսը նախ գնում էր հրեական սինագոգ («նախ՝ հրեային, ապա՝ հեթանոսին»): Երբ տեղի հրեաները մերժում էին նրան, նա դուրս էր գալիս հանրային հրապարակներ (ագորաներ) և դիմում հեթանոսներին:

3. Արեոպագոսի ճառը (Գործք 17): Աթենքում Պողոսի ելույթը հելլենիստական աշխարհի հետ երկխոսության կատարյալ նախօրինակ է: Նա չի մեջբերում Մովսեսի օրենքը, այլ հղում է անում նրանց «անհայտ Աստծուն» և հույն պոետներին՝ քրիստոնեական ճշմարտությունը հասանելի դարձնելով փիլիսոփայական միջավայրին:

Պողոսի գործունեության ամենակարևոր պատմա-իրավական հաղթանակը 49 թ. գումարված Երուսաղեմի ժողովն էր (Գործք 15): Հուդայաքրիստոնյաները պահանջում էին, որ հեթանոսները քրիստոնյա դառնալու համար նախ թլպատվեն և պահեն Մովսեսի օրենքը: Պողոսը և Բառնաբասը կոշտ դիմադրություն ցույց տվեցին: Ժողովը՝ Պետրոսի և Հակոբոս Տյառնեղբոր աջակցությամբ, ընդունեց Պողոսի թեզը՝ *փրկությունը հավատքից է, այլ ոչ թե օրենքի գործերով:* Սրանով քրիստոնեությունը դուրս եկավ հրեական ազգային սահմանափակումից և դարձավ համաշխարհային կրոն:

Անդրադառնալով Պողոս առաքյալի անունով մեզ հասած թղթերին՝ նշենք, որ դրանք համարվում են քրիստոնեական աստվածաբանության հիմքը: Նոր Կտակարանի 27 գրքերից 14-ը ավանդաբար վերագրվում են Պողոս առաքյալին: Այս նամակները գրվել են ավելի վաղ, քան չորս Ավետարանները, ինչը նշանակում է, որ պողոսյան թղթերը քրիստոնեական համակարգված մտքի առաջին գրավոր հուշարձաններն են: Պողոսը ձևավորեց քրիստոնեական դոգմատիկայի հիմնասյուները՝ զարգացնելով աստվածաբանական մի քանի առանցքային ուղղություններ.

Ա. Քրիստոսաբանություն

Պողոսի համար Քրիստոսը պարզապես մարգարե կամ Մեսիա չէ. Նա Աստծո Որդին է, Նախահավիտենական Բանը: Փիլիպպեցիներին ուղղված թղթում (2:6–11) պահպանվել է վաղքրիստոնեական ամենախոր հիմներից մեկը: Պողոսը սովորեցնում է, որ Քրիստոսը, Աստծո կերպարանքն ունենալով, ունայնացրեց Իրեն՝ ծառայի կերպարանք առնելով և խաչի մահվանը հնազանդվելով: Սա դարձավ Քաղկեդոնի և հետագա տիեզերական ժողովների երկաբնակության և միաբնակության վեճերի ելակետային բնագիրը:

Բ. Փրկագործություն և արդարացման տեսություն

Սա պողոսյան աստվածաբանության սիրտն է, որն իր առավելագույն արտահայտությունը գտավ հռոմեացիներին և գաղատացիներին ուղղված թղթերում: Պողոսը փաստում է, որ ոչ հրեան, ոչ հեթանոսը չեն կարող արդարանալ սեփական ուժերով կամ օրենքի տառը պահելով, քանի որ «ամենքը մեղանչեցին» (Հռոմ. 3:23): Արդարացումը Աստծո ձրի շնորհն է, որն ընդունվում է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով: Այս գաղափարը 16-րդ դարում դարձավ Մարտին Լյութերի և Ռեֆորմացիայի հիմնաքարը, բայց նաև առանցքային է ուղղափառ և կաթոլիկ աստվածաբանության մեջ՝ շնորհի և մարդու կամքի համագործակցության (սիներգիայի) համատեքստում:

Գ. Եկեղեցաբանություն

Պողոսն առաջինն է, որ տալիս է Եկեղեցու միստիկական և սոցիոլոգիական բնութագիրը (Ա Կորնթ. 12): Եկեղեցին մեկ մարմին է՝ բաղկացած բազում անդամներից, որտեղ յուրաքանչյուրն ունի իր շնորհը (մարգարեություն, լեզվախոսություն, հովվություն): Սրանով նա հաստատում է քրիստոնեական հավասարության հեղափոխական սկզբունքը. «Խտրություն չկա ոչ հրեայի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ էգի» (Գաղատ. 3:28):

4. Հռոմի բանտերը. առաքյալի վերջին հանգրվանը և կտակը

Պողոսի կյանքի վերջին շրջանը դրամատիկ է: Երուսաղեմում ձերբակալվելուց հետո նա, օգտվելով հռոմեացի լինելու իր իրավունքից, պահանջում է կայսերական դատաստան: Սա պատմականորեն հանգեցնում է նրա երկարատև ու վտանգավոր ճանապարհորդությանը դեպի Հռոմ (մոտ 60 թ.):

Հռոմում Պողոսը երկու անգամ բանտարկվում է: Առաջին բանտարկության ժամանակ (տնային կալանքի տակ) նա գրում է իր հռչակավոր «Բանտի թղթերը» («Եփեսացիներին», «Փիլիպպեցիներին», «Կողոսացիներին», «Փիլիմոնին»): Ներոն կայսեր հալածանքների շրջանում (64–67 թթ.) տեղի է ունենում երկրորդ՝ ավելի խիստ բանտարկությունը Մամերտինյան մռայլ բանտում, որտեղից էլ նա գրում է իր վերջին նամակը՝ «Բ Տիմոթեոսին»:

Բանտային շղթաները ոչ թե կոտրեցին Պողոսին, այլ ավելի բյուրեղացրին նրա աստվածաբանությունը: Մարմնական անազատության մեջ նա գրում է քրիստոնեական ուրախության մասին (Փիլիպ. 4:4՝ «Ուրա՛խ եղեք Տիրոջով ամեն ժամ»): Կյանքի մայրամուտին, զգալով մոտալուտ նահատակությունը, նա թողնում է իր հոգևոր կտակը. «Բարի պատերազմ մղեցի, ավարտեցի ընթացքս, պահեցի հավատը» (Բ Տիմ. 4:7): Որպես Հռոմի քաղաքացի՝ Պողոսը չխաչվեց (ինչպես Պետրոսը), այլ սրով գլխատվեց Հռոմի պարիսպներից դուրս (Օստիան ճանապարհին)՝ մոտավորապես 67 թվականին:

Տարսոնացի Սավուղի կերպարանափոխությունը Պողոս առաքյալի պատմական պատահականություն չէր, այլ Եկեղեցու կյանքում տեղի ունեցած սրբազան հեղաշրջում: Ունենալով կրոնական փայլուն կրթություն, հելլենիստական ճկուն միտք և հռոմեական քաղաքացիության իրավական լծակներ՝ նա կարողացավ քրիստոնեությունը դուրս բերել հուդայական նեղ ազգային միջավայրից և այն դարձնել տիեզերական պատգամ:

Պողոս առաքյալի թղթերում ձևավորված աստվածաբանական համակարգը՝ Քրիստոսի Ավետարանի, հավատքով արդարացման և Եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի մասին, հիմք դարձավ հետագա դարերի տիեզերական ժողովների համար: Դամասկոսի ճանապարհի կուրացնող լույսից մինչև Հռոմի բանտերի շղթաները Պողոսի անցած ուղին ապացուցեց, որ գաղափարի և հավատքի ուժը կարող է փլուզել կայսրությունների պատերն ու սահմանները՝ ստեղծելով մի նոր հոգևոր քաղաքակրթություն:

Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ

Աստվածաշունչը՝ որպես 17-րդ դարի գրքային առաջնահերթություն

Հայ գիրքը դարերի հոլովույթում առանցքային նշանակություն է ունեցել հայ ժողովրդի պատմության մեջ: Գրքարվեստի զարգացման գործում ամենակարևոր դերակատարություններից մեկը վերապահվում է 17-րդ դարին: Միջնադարյան գրավոր ժառանգության զգալի մասն այս դարաշրջանում է վերարտադրվել, որի շնորհիվ մեզ են հասել բազմաթիվ հայտնի ու անհայտ հեղինակների գործեր: Մյուս կողմից՝ գրքերի մեծ պահանջարկը հանգեցրել է շարունակական տպագրությանն անցնելուն, որը կյանքի է կոչվել հայերեն ամբողջական Աստվածաշնչի տպագրության ծրագրով: Վերջինիս մեկնարկը տրվել է 16-րդ դարի վերջից՝ ի պատասխան Հռոմի պապերի Արևելյան քաղաքականության: Նպատակադրվելով վերականգնել Ռեֆորմացիոն շարժման հետևանքով թուլացած դիրքերը՝ պապական աթոռն ստանձնեց Արևելաքրիստոնեական Եկեղեցիների համար կրոնաքարոզչական գրականություն տպագրելու և կրթություն ապահովելու նախաձեռնությունը: Օսմանյան ու Սեֆյան տիրապետության տակ գտնվող Հայ Եկեղեցու թեմերը, պապական աթոռի հետ Աստվածաշնչի տպագրության շուրջ ավելի քան կես դար բանակցելուն համընթաց, Աստվածաշունչ ունենալու անհրաժեշտությունը լրացրել են գրչության ճանապարհով:

Նախորդ դարերի գրավոր ժառանգության վերհանումն սկսվել է ձեռագրերի հավաքումից, վերանորոգումից ու կազմումից: Ընդօրինակման, բազմացման ու պահպանման նպատակ ունեցող այդ գործընթացների արդյունքում մեծացել են գրքերի շրջանառությունը և մատենադարանների ձևավորումը եկեղեցական կենտրոններում: Այս ամենի համար կարևոր նախադրյալ էր ուսումնագիտական ու գրչական նոր կենտրոնների ձևավորումը Օսմանյան կայսրության ու Սեֆյան Իրանի առևտրատնտեսական զարգացած ու ռազմաքաղաքական առումով համեմատաբար ապահով բնակավայրերում:

Այս համատեքստում Աստվածաշունչը դարձել է գրքային առաջնահերթություն: Աստվածաշնչի պահանջարկն այնքան մեծ է եղել, որ նույնիսկ Ոսկան Երևանցու՝ Աստվածաշնչի տպագրությունն ի զորու չի եղել ընդհատելու ավանդական եղանակով ձեռագրերի բազմացումը: Պահանջարկը հնարավոր է եղել բավարարել միայն Աստվածաշնչի՝ 18-րդ դարի առաջին կեսի տպագրություններով. մեկը՝ 1705–1707 թթ. Կ. Պոլսում Պետրոս Լատինացու, և մյուսը՝ 1733 թ. Վենետիկում Մխիթար Սեբաստացու նախաձեռնությամբ:

Գրքային առաջնահերթությունների շարքում Աստվածաշնչի գլխավորության մասին են փաստում հիմնականում նրա արժևորման և առք ու վաճառքի մասին հիշատակարանային բազմաթիվ տեղեկությունները:

Աստվածաշնչի արժևորումը

Բնագրերի փնտրտուքի և հավաքման այս ժամանակաշրջանում մեծապես արժևորվել են Աստվածաշնչի հին օրինակները: Թե որքան սուղ էր Աստվածաշունչ ձեռագրերի քանակը, կարելի է պատկերացում կազմել Սսի կաթողիկոս Ազարիա Ջուղայեցու (1584–1601 թթ.)՝ 1585 թ. Հռոմի Գրիգոր XIII պապին ուղղված պաշտոնական խնդրագրից: Ըստ այդմ՝ ձեռագրերի թիվը հազիվ հասնում է քսանի. «….ի յամենայն ազգս Հայոց, որ է շատ և բազում, ճորով թե գտուի Ի (20) Աստուածաշունչ….»:

Աստվածաշնչի բոլոր գրքերը մեկ հատորում ամփոփելու ավանդույթը տարածում է գտել Կիլիկյան Հայաստանում 13-րդ դարի վերջից՝ եվրոպական համանման ավանդույթի ձևավորման ազդեցությամբ, որը գրեթե ընդհատվել է 14-րդ դարում: Եվ երբ Աստվածաշնչի հանդեպ մեծ պահանջարկ է ձևավորվել 17-րդ դարի առաջին կեսին, վաճառվել են Աստվածաշնչի սակավաթիվ հին ձեռագրերը: Այդպիսի ճանապարհ է անցել Ոսկան Երևանցու տպագրության նախագաղափար օրինակներից Հեթում Բ թագավորի (1289–1306 թթ.) ձեռագիր Աստվածաշունչը: Ձեռագրի հիշատակարանի համաձայն՝



Ծննդոց գրքի անվանաթերթ. Աստվածաշունչ, 1660 թ., Սպահան

Արիստակես վարդապետ Խարբերդցին, Աստվածաշունչ ունենալու փափագով տարված, հինգ-վեց տարի դեգերել է և ի վերջո 1624 թ. Տիգրանակերտում (Ամիդ, ներկայում՝ Դիարբեքիր) գտել ու գնել է շատ թանկ արժողությամբ մագաղաթյա ձեռագիրը. «Փա՛ռք…. ես՝ վերջինս ի բնաւիցս և տրուպս ամենայնի, տղխեղծ և փցնամիտ բանի սպասաւորս՝ Արիստագէս լոկ վարդապետ [յ]որջորջորեալ, ցանկացաւ եղէ Աստուածաշունչ սուրբ գրոցս, և ելի ի խնդիր սմին մեծաւ փափագանաւք, մինչ հինգ և վեց ամ ի պանդխտութիւն շրջեցա վասն սորա, միթէ լիցի, զի հասից փափագանաց իմոց: ….Վասն զի յորժամ գնացաք ի Տիգրանակերտ, կամաւքն Աստուծոյ պատահեաց մեզ Աստուածաշունչ սուրբ գիրքս՝ մեծագին և բազմածախ» (ՄՄ, 180, 563ա, բ):

Հեթում թագավորի անունով հայտնի այդ Աստվածաշունչը կրկին վաճառքի է հանվել 1656 թ. Կարինում (Էրզրում): Երուսաղեմի ուխտավոր, Հովհաննավանքի վանահայր Զաքարիա վարդապետ Վաղարշապատեցին, գնահատելով թագավորական ձեռագրի կարևորությունը, գնել ու որպես նվեր կտակել է Հովհաննավանքին (ՄՄ, 201, 613ա):

Մեկ այլ ուշագրավ պատմություն է ամփոփում Երզնկայի Աստվածաշունչը (Երուսաղեմ, 1925): Ամենավաղ թվագրվող միահատոր այս նշանավոր Աստվածաշունչը գրչագրվել է 1269 թ. Երզնկայի Սուրբ Սարգիս եկեղեցում՝ Սարգիս արքեպիսկոպոսի և նրա որդի պարոն Հովհաննես իշխանի պատվերով: Ձեռագրի՝ մոտ երկու տասնյակի հասնող կրկնվող հիշատակագրությունները մի կարճ տեղեկություն են պարունակում առ այն, որ 1626 թ. Իսքանդարի որդի վանեցի խոջա Զիրաքը 1000 ղուրուշով փրկագնել է Սուրբ Գիրքը և նվիրաբերել Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքին՝ ի հիշատակ իրեն և հարազատների: Փրկագնման պատմությանը մասնակցած և ձեռագիրը Երուսաղեմ հասցրած Վիրապեցի Դավիթ եպիսկոպոսը ձեռագրի մեկ այլ հիշատակրանում պատմում է, որ որպես Երուսաղեմի նվիրակ՝ Գրիգոր Պարոնտեր պատրիարքի (Երուսաղեմի բարեվորոգիչ պատրիարք, 1613–1645 թթ.) հրամանով մեկնել է Էրզրում և այնտեղ տեսել, որ Աստվածաշունչը գերի է պետության դեմ ապստամբած Աբազա փաշայի ձեռքին (Երուսաղեմ, 1925, 1180ա): Փրկագնման այս պատմությունն այնքան նշանակալի է եղել, որ այդ մասին հիշատակագրություն է թողել նաև Գրիգոր Պարոնտերն իր Պատմագիրք-գրանցամատյանում՝ նշելով Աստվածաշնչի հետ նվիրաբերած Ճաշոցի մասին ևս. «Աստուած ողորմի Վանեցի խոջա Զիրաքին, որ մականունն Պռկօշ կոչին, որ լավ բուն Աստուածաշունչ մի ետուր յիշատակ Սբ. Երուսաղեմայ և Սբ. Յակոբայ և պատուական զարդարեալ Ճաշու գիրք մի» (Երուսաղեմ, 322, 26բ):

➥ էջ 6

Խրիմյան Հայրիկ և Րաֆֆի՝ ազգային-ազատագրական պայքարի ռահվիրաները

Սկիզբը՝ թիվ 9

«Խրիմեանը հոգւով բանաստեղծ է, իսկ սրտով՝ առաքեալ: Նա յիշեցնում է մեզ հինգերորդ դարու անձնուրաց աբեղայներին, որք, հոգևոր զինուորութեամ ցուպը ձեռքներին կրած, հուրի և սուրի միջից անցնելով, պտտում էին Հայաստանում՝ ուսում, գիտութիւն և կրօնք էին տարածում:

Տասն և իններորդ դարը Հայոց եկեղեցականների մէջ, բացի Ներսէս Ե., չէ ծնել մի այլ մարդ, որոյ կեանքը լի լիներ այնքան բազմատեսակ անցքերով, որպէս եղել է Խրիմեանինը»

(Մելիքզադէ (Րաֆֆի), «Մշակ», 1873, թիվ 49):

Հայ մշակույթի երևելի գործիչներից թերևս Րաֆֆին է առավել ծավալուն հուշերով ու բազմակողմանիորեն ներկայացրել Վասպուրականի արծվին: Րաֆֆու՝ Խրիմյանին ձոնված բանաստեղծություններն ու հուշագրությունները, որոնք նա տպագրել է ժամանակի մամուլում՝ հիմնականում Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» պարբերականում, մեծ գրողի մահից հետո ի մի է բերել նրա սիրելի կինը՝ Աննա Րաֆֆին, և առանձին գրքով հրատարակել Թիֆլիսում (Րաֆֆի, Արծիւ Վասպուրականի (Խրիմեան Հայրիկ), Թիֆլիս, 1893): Ժողովածուի սկզբում՝ «Ազդ»-ում, Աննա Րաֆֆին, կարևորելով իր ձեռնարկումը, գրում է հետևյալը. «Ամենապատիւ Խրիմեան Հայրիկի Ամենայն Հայոց Կաթողիկոս հաստատուելը որպէս ամենքին ուրախացրեց, նոյնպէս եւ մեզ, մանաւանդ որ իմ հանգուցեալ ամուսնուս իղձը կատարուեցաւ:

Հայութեան այդ ամենաարժանաւոր Հովուապետի կեանքի ու գործունէութեան վերաբերեալ՝ ամուսնուս զանազան թուականներում գրուածքները հաւաքելով՝ ամփոփում եմ սոյն հատորի մէջ՝ ձօնելով Նորին Վեհափառութեան վսեմ անուանը»: Այս գրքում զետեղված առաջին հուշագրությունը 1873 թ. «Մշակ» թերթի 49-րդ համարում տպագրված հոդվածն է:

Մեծ հայրենասերն ու ականավոր պատմավիպասանը շատ դիպուկ է նկատել, որ Խրիմյանը «հոգով բանաստեղծ» է: Այս բնորոշմամբ Րաֆֆին ընդգծում է, որ Խրիմյանը, ինչպես բոլոր բանաստեղծները, ունի զգայուն հոգի, խոսքի պատկերավորություն ու հուզականություն, խորիմաստ մտքեր, գրական-ստեղծագործական աստվածատուր շնորհ: Ըստ Րաֆֆու՝ Խրիմյանը «սրտով առաքյալ» է. նա ճշմարիտ հայրենասեր է, բոցաշունչ քարոզիչ և ազգի հոգսերով ու ցավերով ապրող հոգևորական, որն ստանձնել է հայրենի ժողովրդին ծառայելու սուրբ առաքելությունը: Րաֆֆին Խրիմյանին նմանեցնում է Ե. դարի (ոսկեդարյան) հոգևորական գործիչներին, որոնք միավորում էին հայրենասիրությունն ու հավատքը, պատրաստ էին ապրելու ու մեռնելու վասն հավատո և վասն հայրենյաց:

Հուշագրության սկզբում Րաֆֆին հանգամանորեն անդրադառնում է Խրիմյան Հայրիկի կենսագրության ուշագրավ դրվագներին: 1837 թ. Վանի Այգեստան արվարձանում Մկրտիչ Խրիմյանը՝ կրակոտ աչքերով ու գունատ դեմքով բարձրահասակ մի պատանի, ժամերով առանձնանում էր բնության գրկում՝ Այգեստանի ուռենիների շվաքում, հիանում հայրենի տեսարաններով ու Վանա լճով և այդ հովվերգական առանձնության մեջ գրում իր անդրանիկ երգերը: Լիմ, Կտուց, Աղթամար և այլ անապատներն ու այնտեղ ամբարված գիտությունը, ինչպես նաև «Նարեկ»-ի ու «Հայսմավուրք»-ի ընթերցանությունը չկարողացան իրենց վանդակում պարփակել ու զսպել աշխույժ պատանու հոգու պոռթկումը: Ուսումնատենչությունը և նորանոր գիտելիքներ ձեռք բերելու և բազմակողմանիորեն զարգանալու ձգտումը Խրիմյանին հասցրին Կոստանդնուպոլիս, որն այն ժամանակ համարվում էր «Վանի Աթենքը»: Չքավորության պատճառով Խրիմյանը չկարողացավ ավարտել որևէ դասընթաց բարձր ուսումնարանում, քանի որ ստիպված էր միաժամանակ հոգալ օրվա հացի խնդիրը: Այդուհանդերձ, իբրև եռանդուն ու գործունյա մարդ՝ Խրիմյանն իր ուսման ծարավը հագեցրեց ինքնակրթությամբ, կարճ ժամանակում այնպիսի հոգեմտավոր թռիչք ունեցավ, որ մի քանի դպրոցներում և ամիրաների տներում ընդունվեց որպես դաստատու:

Կոստանդնուպոլիսը երկար չզբաղեցրեց ազգային հոգսերով տառապող երիտասարդին. հայրենասեր գործչին տանջում էին կարոտն ու հայրենի քաղաքին ծառայելու ձգտումը: Վերադառնալով Վան՝ նա գտավ հորը վախճանված, սակայն ավագ եղբոր՝ Մարխանի թախանձանքով ամուսնացավ օրիորդ Սևիկյանի հետ և ունեցավ մի դուստր: Արդեն նորաստեղծ ընտանիքի հայր Խրիմյանն իր երկու ընկերների հետ ճանապարհորդեց դեպի Այրարատ, Շիրակ ու Գողթն, տեսավ Անիի ավերակներն ու հայոց նշանավոր հիշատակները: Այս ուղևորության արդյունքը եղավ նրա «Հրավիրակ Արարատյան» գողտրիկ բանաստեղծությունը, որտեղ հեղինակը, իր աշակերտների ձեռքից բռնած, պտտվում է Հայաստանում, այցելում Տրդատի, ս. Գրիգոր Լուսավորչի, ս. Մեսրոպ Մաշտոցի, ս. Մովսես Խորենացու և Եղիշեի շիրիմներին, ոգեկոչում նրանց հիշատակը և նրանց անունից պատմում հայրենիքի թշվառությունները: Րաֆֆին Խրիմյանի այս բանաստեղծությունը համարում է եզակի նմուշ մեր գրականության մեջ, ուր այնպես գրավիչ և ազդու կերպով արտահայտվում են այն բոլոր ցավալի զգացումները, որ մարդու հոգում արթնանում են սեփական հայրենիքի ավերակները դիտելիս: Աշխատությունը լույս ընծայելու համար Խրիմյանը կրկին մեկնեց Կ. Պոլիս, որտեղ էլ 1850 թ. այն տպագրվեց Այվատյանի հովանավորությամբ:

Կ. Պոլսում գտնվելու ընթացքում Խրիմյանը բարերար գտավ՝ ի դեմս Կարապետ ամիրա Պալյանի, որի օգնությամբ էլ ուղևորվեց Պաղեստին՝ Սուրբ երկիր: Այս ճանապարհորդության արգասիքը եղավ սրբազան ոգևորությամբ ներշնչված «Հրավիրակ Ավետյաց երկրի» բանաստեղծական գործը (տպագրված 1851 թ.՝ հավանաբար դարձյալ Պալյան ամիրայի մեկենասությամբ), որտեղ օրհներգվում են բիբլիական աշխարհը, Մեսիայի կյանքը և Հիսուսի տնօրինական (Քրիստոսի մարդեղությանն ու գործերին առնչվող) սրբատեղիները:

Այս երկու բանաստեղծությունները հռչակեցին Խրիմյանի անունը: Հովհաննես ամիրա Տատյանի օգնությամբ Խրիմյանը մեկնեց Կիլիկիա՝ Սսի վանքում ուսումնարան բացելու և լուսավորություն տարածելու նպատակով: Սակայն հանգուցյալ Կիրակոս Կաթողիկոսի հետ հարաբերությունները ոչ-բարեկամական, ավելին՝ անտանելի դառնալու պատճառով գործը ձախողվեց: Նա վերադարձավ Պոլիս, նշանակվեց Խասգյուղի օրիորդաց վարժարանի ուսուցիչ և այդ ընթացքում հրատարակեց մի տետրակ՝ Հռոմի պապի աշխարհային փառամոլության դեմ:

1852 թ. Խրիմյանը վերադարձավ Վան՝ վախճանված գտնելով կնոջն ու դստերը:


➥ էջ 7

Ջաքարիա Ջագեցու ճառը՝ Ամենօրհնյալ Տիրուհի Աստվածածնի և միշտ կույս Մարիամի ննջման մասին

Լրարածների Արարիչն ու բոլորի Ճարտարապետն սկզբում երկրի վրա լույս ծագեցնելու համար ստեղծեց-գոյացրեց զանազան լուսատուներ, որոնք հալածելով վանում են խավարն ու գիշերվա մութը: Եվ երբ [այդ լուսատուները] հպվելով մոտենում են մեր տեսողությանը, [մեզ] համարձակություն են շնորհում և թույլ են տալիս տեսնել մեր առջև դրված էությունները: Եվ [մենք] ուրախանում-հրճվում ենք մեր աչքերի առջև հայտնված երևույթներով, այսինքն՝ լուսնով, աստղերով, ջահերով ու մոմերով և բոլորից գերազանց ու վեր արեգակով, որը հեշտությամբ լուսավորված և իր անշեջ ճառագայթներով հալածելով՝ վերացնում է խավարը և ընծայի պես մեզ լույս է շնորհում:

Այսպիսի մի զվարճալի ուրախություն է արտացոլվում մեր սրտերում, երբ տոնախմբում ենք սրբերի ու մաքրագործվածների հիշատակը և փառաբանում նրանց մարտի ու նահատակության հաղթանակի օրը: Մեր բանական մտքի տեսարանները մաքրափայլ կերպով պայծառանում են, և մեր սրտերի աչքերը լուսավորվելով հրճվում են. և մենք, վեր բարձրանալով, անցնում-գերազանցում ենք աշխարհածուփ այս կյանքի մրրկածին զբաղմունքների ու նյութական զգալի հաճույքների սահմանը: Եվ մեր միտքը, վեր բարձրանալով, սավառնում է դեպի բարձունքներն ու անմահությունը, ինչպես գրված է. «Արդարի հիշատակով ուրախանում են ժողովուրդները»: Եվ որքան որ արեգակը բոլոր [մյուս] լուսատուներից վեր է ու հրաշափառ՝ լինելով բոլորից իսկական ու տիրական, և իր աննվազ ու անշեջ ջահավոր ճառագայթներով մեր հայացքը բազում մղոններ ու ասպարեզներ ավելի հեռուն է ձգում, քան այն մյուս լուսատուները, որոնց մասին վերևում հիշատակեցինք, այսպես էլ լինում է, երբ ոգեկոչում ենք սուրբ և ամենօրհնյալ Աստվածամոր ու անարատ Կույսի հիշատակը և տոնախմբում նրա վերափոխման ու հանգստյան օրը:

Այնժամ ուրախանում-ցնծում է երկինքը, և զվարճանում է երկիրը, և անմահների բոլոր զորքերը մեզ հետ տոնակից են լինում: Այնժամ աստվածապետական Հոգու շնորհների պարգևները տարածվում և իջնելով՝ հորդում են արարածների վրա, և նույն ինքը՝ ամենօրհնյալ, անարատ սրբուհին, բարեխոս է լինում մեզ համար, և Աստծո շնորհների դռները բացվում են երկնքից, ու մարդասերի առատ և անչափ ողորմությունը հոսելով լուսավորում է մեզ: Այնժամ պատռվում-պատառոտվում է մեր մեղքերի մուրհակը, և ջնջվում է մեր հանցանքների ձեռագիր արձանագրությունը, և պատշաճորեն հարթվում է դեպի անշարժ հույս ու մշտնջենական ուրախություններ տանող



Ջաքարիա Ա Ջագեցի Ամենայն Հայոց Կաթողիկոս. 855—876 թթ.

մուտքի ճանապարհը, և բացահայտորեն բժշկվում են տանջալից ցավերը, չար ու ծանր հիվանդությունները, և հեռացվում են մեր հոգու ու մարմնի նեղությունները: Անարատ և ամենօրհնյալ Աստվածածնի բարեխոսությամբ՝ եղանակները բարեխառն, շահավետ ու օգտակար են մեր երկրում, և պտղաբեր ու արդյունավետ ցողերը, բարձունքներից վար իջնելով, տարածվում են մեր սահմանների անդաստաններում և պարարտացնելով՝ բազմացնում են զանազան բույսերի ու տնկիների առատությունը մեր բնակավայրերում: Եվ մեր հնձանները, կրասներն ու ամանները հորդում են գինով, և մեր անբան անասուններն ու հոտերը բազմանում են իրենց արոտներում և շատանալով՝ վերածվում են անթիվ բազմության՝ ի լրումն մեր անկարոտ ու բավարար կյանքի: Քանզի երբ մենք տոնախմբում ենք սրբուհի, անարատ և ամենօրհնյալ Աստվածածնի ննջման ու փոխման հիշատակը, մեր աշխարհից չքանում ու դադարում է վաղահաս և տարաժամ մահը, և բոլորս, կատարյալ հավատով ճանապարհորդելով, գնում ենք դեպի գերեզման, ինչպես հունձքի ժամանակ հասունացած ցորենը, որ ամբարվելով հավաքվում է շտեմարաններում. և հրեշտակները, ժողովելով մեր հոգիները, առաջնորդում և հանգստացնում են նրանց Աբրահամի գոգում:

Սուրբ և անարատ Աստվածածնի բարեխոսությամբ՝ փրկիր մարդկանց պիղծ ու անմաքուր դևերի վտանգից: Պահպանիր չար մարդուց ու զերծ պահիր դատաստանից, փրկիր գետերի որոգայթներից, գազաններից ու ավազակներից և զորացրու մեզ, ծովի փոթորկածին ալիքների մեջ ու պատերազմում պարսպիր, պաշտպանիր մեզ և խորտակիր թշնամիների հարձակումը և երկրաշարժից, ջրհեղեղից ու հրդեհից անառիկ պահիր քաղաքները: Քանզի Աստված երկրի բոլոր ազգերից միայն նրան ընտրեց, որպեսզի ծնվի նրանից: Նա երանելի հռչակվեց բոլոր ազգերի կողմից, որոնք բնակվում են ողջ տիեզերքում: Պատվվեց նախաստեղծ Ադամը, քանզի արարվեց Աստծո ձեռքերով: Երանելի համարվեց Աբրահամը, քանի որ Աստծո բարեկամ կոչվեց: Գովվեց նաև Հակոբը, քանի որ Աստծո հետ համբերությամբ գոտեմարտի բռնվեց: Մարգարեներն արժանացան բարեհաճության, քանի որ Սուրբ Հոգով լցված՝ Աստծո գալուստը երկնքից երկիր քարոզեցին: Առաքյալները երջանկացան, քանի որ մարմնով տեսան Աստծու Բանին երկրի վրա և իրենց ձեռքերով շոշափեցին Կենաց Բանին: Իսկ այս անարատ սուրբ Կույսն արժանի եղավ գերագույն, անպատմելի և հրաշափառ երանությունների, քանի որ հղացավ ու ծնեց մարդկային մտքից ու ընկալումից անդին գտնվող Աստծո Բանին, Որ ծնվել է Հորից՝ բոլոր ժամերից ու ժամանակներից առաջ, և Որի հավիտենական ծննդյանը միայն փառքի Հայրն է գիտակ:

Նա Որդին է՝ «Արուսյակից առաջ արգանդից ծնված», Որ Իր էությամբ հավիտյանս Հոր հետ է, Որ Հոր աթոռակիցն է, Որ անստվեր լույսն է Հոր անհասանելի լույսից, ճառագայթը, կերպարանքը և պատկերն է Ծնողի էության, արեգակնափայլ փառքի հրաշափառ ծագումը և անսահմանափակելի ու աներևույթ Աստծո պատկերը: Անսկիզբ Բանը՝ անսկզբնական Հորից, Աստված՝ Աստծուց, Հոր պատկերակիցը և նորոգող ու իշխանական Սուրբ Հոգու փառակիցը: Նրա փառքին էին ցանկանում վերևից նայել անմահների հոգեղեն բանակները. նրան էին փափագում ու բաղձում աստվածակիր մարգարեները, և արդարներն ու թագավորները և հայրապետները տենչում էին գոնե աղոտ տեսիլքով [տեսնել], բայց չարժանացան: Իսկ այս ամենօրհնյալ սրբուհին իր արգանդում ամբողջությամբ և անկիզելիորեն կրեց աստվածության անբովանդակելի հուրը, քանզի անժամանակ Բանը՝ Հորից ծնված, ինչպես երկնքից իջած անձրև, բնակվեց Սուրբ Կույսի անարատ և մաքրափայլ արգանդում: Եվ ինչպես երբեմնի այն ժամանակներում, Ադամի կողը վերցնելով, [Աստված] կերտեց Եվային՝ [իբրև] ամբողջական գոյությամբ կատարյալ մարդու, և Ադամից ոչինչ չկորավ ու չպակասեց, այնպես էլ Աստծո Բանը, Սուրբ Կույսի մարմնի անդամներից մասնիկ վերցնելով, կերտեց Իր մարմինն ու տաճարը, և ամենաերջանիկ Սուրբ Կույսի սուրբ մարմնից ոչինչ չկորավ՝ [մնալով] անփոփոխ կուսական պատկերով: Եվ սուրբ Կույսի մաքրափայլ արգանդում մարմնի մեջ պարփակվեց անսահմանելի Բանն Աստված և անխառնելի [բնությունները]՝ մարդկայինն ու աստվածայինը, միավորեց: Եվ նոր կերպարանք ստանալով՝ հրաշագործվեցին բնությունները, քանզի մարդկային բնությունը միախառնվեց Աստծո բնությանը: Եվ այն բնությունները, որոնք երբեմնի օտար ու անհաշտ էին միմյանց, այժմ եղան մեկ՝ անշփոթ կերպով խառնված ու միացած, և ոչ մի բնություն չոչնչացավ ու զուր տեղը չվերացավ, այլ Աստծո Բանն ամբողջական պահեց երկու բնությունների հատկությունները՝ միավորված մեկ անձի և մեկ դեմքի մեջ: Բնությունները գոյակցում են զուգահեռաբար՝ առանց որևէ բնության վերացման, որտեղ բանական հոգին միջնորդ է դարձել [աստվածային] էության և թանձրագույն մարմնի միջև: Եվ [իբրև] մանուկ ծնվում է անժամանակ Որդին՝ Էմմանուելը, որ նշանակում է «Աստված մեզ հետ»: Եվ այսպիսի գերազանց ու սքանչելի փառքի արժանացավ սուրբ Աստվածածինը, քանի որ երկնքում [բնությամբ] անմայր Աստծո Որդու համար երկրի վրա եղավ մայր՝ առանց երկրավոր հոր: Եվ անժամանակ [ծնվածը] մորից ծնվեց մեր փրկության համար: Հավիտենական լույսի՝ Հոր Որդին այսօր անարատ Կույսի որդին է դառնում և կոչվում [Փրկիչ]՝ հեթանոսների փրկության համար: Ահա մեծ, հրաշափառ ու զարմանալի մի խորհուրդ. քանզի փառքի Հայրը, Որ երկնքում Ծնողն է անսկիզբ Որդու, արժանի արեց ամենաերջանիկ Կույսին՝ մարմնով ծնելու անսահմանելի Բանին: Որովհետև Նրան, Որին Հայրը նախքան արուսյակը անբաժանելիորեն ծնեց իբրև Որդի, այսօր Սուրբ Կույս Մարիամը ծնեց անճառելիորեն:

Հայրը երկնքում ունի միածին Որդի՝ տարածությամբ չպարփակվող Աստված, և [Նա] երկրի վրա ունի մայր՝ անարատ կույս Մարիամին: Քանզի Նրան, «Ով արգանդից ծնվել է Հորից՝ արուսյակից առաջ», սուրբ Կույսն իննամսյա ժամանակամիջոցում անկիզելիորեն կրեց իր անարատ և մաքրափայլ արգանդում: Եվ Նա, Որի հետ խոսեց ամենակալ Հայրը՝ ասելով. «Քեզ հետ է Իմ զորությունների օրերի սկիզբը», այսօր անքննելիորեն սկիզբ առավ անարատ ու սուրբ Կույսից Հրեաստանի Բեթղեհեմում: Եվ Նա, Որ Իր Խոսքով կրում ու պահում է ամեն ինչ և Իր շրթունքների հրամանով կառավարում է երկնքի ու երկրի բոլոր արարածներին, այսօր Կույսի գրկում բարձրացվեց. [Նա]՝ անժամանակ Որդին, Որ [ստեղծել է] տարիների, օրերի ու ժամանակների եռակի բաժանումը: ➥ *էջ 8*

Աստվածաշունչը՝ որպես 17-րդ դարի գրքային առաջնահերթություն

➥ *էջ 5*

Երուսաղեմի ձեռագրատանը պահվող այս Ճաշոցի էջերում խոջա Զիրաքը մանրամասնում է, որ երկու գրքի համար վճարել է 1050 ղուրուշ: Այդպիսով՝ գրեթե նույն ծավալն ու մեծությունն ունեցող Ճաշոցը հնարավոր է եղել ձեռքբերել 20 անգամ էժան գնով (Երուսաղեմ, 1996, 988ա):

Օսմանյան տարածաշրջանների ձեռագրերի հիշատակարաններում չի հստակեցվում, թե արդյո՞ք ղուրուշը իսպանական ութ ռեալանոց դրամն է (հայտնի է ռեալ ղուրուշ անունով), թե՞ հոլանդական ղուրուշը (հայտնի է էսդի ղուրուշ անունով), որոնցից առաջինը պարունակում է ≈25,5 գր արծաթ, իսկ երկրորդը՝ ≈ 20–21 գր: Այնուամենայնիվ, ռեալ ղուրուշը լայն տարածում է ունեցել օսմանյան շուկայում 1550 թ. հետո: Այսինքն՝ ձեռագիրը փրկագնվել է անհավանական թվացող ≈20,7–25,5 կգ արծաթին համարժեք գնով:

Ի՞նչ արժեր Աստվածաշունչը

Մարդկային հնարավորություններ և ժամանակ պահանջող, մեծ ու ծավալուն, հարուստ պատկերազարդումներով և ամենաթանկ նյութերով Աստվածաշնչի գրչագրության պատվիրատուներն ու սեփականատերերը 17-րդ դարում հիմնականում բարձրաստիճան հոգևորականներն են և առևտրական վերնախավի ներկայացուցիչները:

Աստվածաշնչի գրչության արժեքի մասին վաղագույն հիշատակությունը պահպանվել է թերևս Հռոմի Գրիգոր XIII պապին ուղղված նույն՝ 1585 թ. պաշտոնական խնդրագրում: Ըստ այդմ՝ հոգևորականների համար խիստ անհրաժեշտ Աստվածաշունչը գրչագրելու գինը 200–300 ֆլորին էր. «….[Աստուածաշունչը] կու նստի գինն ԲճՃ (200) կամ ԳճՃ (300) ֆլորին. մէկն և չի գտուիլ և յոյժ պիտանի է վարդապետաց և հայրապետաց և քահանայից»:

Հռոմի պապերի հետ հետագա պաշտոնական գրագրություններում արժեքը հասնում է անգամ 400 ֆլորինի: Լայն շրջառություն ունեցող ֆլորենտական ֆլորինը և վենետիկյան դուկատը (հայտնի է ֆլորի անունով) կշռում են ≈3,5 գր ոսկի: Այսինքն՝ մեկ Աստվածաշունչն արժեցել է ≈700 գր-ից 1 կգ ոսկի: Համեմատության համար նշենք, որ 1603 թ. Վանի տարածաշրջանում պատվիրել են Ավետարան ընդօրինակել 20 ֆլորիով, 1607 թ. Ամիդում 40 ֆլորիով վաճառել են Հայսմավուրք, 1618 թ. Կ. Պոլսում 17 ոսկով՝ ընդօրինակել Ավետարան:

Պաշտոնական ու թերևս մի փոքր չափազանցված գների կողքին ձեռագրերի հիշատակարաններում նշվում է Աստվածաշնչի գրչության իրական արժեքը: Նմանօրինակ կարևոր տեղեկություն է պարունակում Ոսկան Երևանցու ձեռքի տակ եղած Աստվածաշնչի գրքերից երկրորդը, որ նույնպես պատկանել է Ջաքարիա Վաղարշապատեցուն: Ըստ վարդապետի հիշատակարանի՝ 1650-ական թթ. Նոր Ջուղայի առաջնորդին 10 թուման է վճարել՝ պատվիրելով Սպահանում Աստվածաշունչ գրչագրել տալ: Սակայն տված գումարը բավարար չի եղել, և ձեռագրի գրչությունն ու նկարազարդումն ավարտին են հասցվել ջուղայեցի խոջա Սաֆրազի որդի Վարդանի հանգանակած միջոցներով (ՄՄ, 201, 610բ-614ա):

Սեֆյան Իրանի արծաթյա մետաղադրամները չափվել են «ուրվական», գոյություն չունեցող դրամական միավոր՝ պատմական մոնղոլական շրջանին պատկանող դինարով (հայկական աղբյուրներում՝ նաև դեան կամ դիան): 1600-ականներին մեծ դրամական հաշվարկները կատարվել են 10 000 դինարին համարժեք թումանով. 50 աբասին հավասար էր 1 թումանի: Այդպիսով՝ ձեռագրի գրչությունը 500 աբասիից ավել է արժեցել՝ կշռելով մոտ 3,8–4 կգ արծաթ:

Ուշագրավ է, որ Վենետիկում Աստվածաշնչի տպագրությունից հետո, երբ բնագրի անհրաժեշտությունն այլևս չկար, նամակներից մեկում Մխիթար աբբահայրը իր աշակերտներին գրում է, որ ձեռագիր Աստվածաշունչ կարող են ձեռք բերել, եթե ձրի կամ մինչև 10 ղուրուշ արժողությամբ լինի. «….եթէ ձրի լիցի, կամ տասն եւ կամ տասն եւ հինգ ղուռուշով՝ բէր, եթէ գոյ, եւ եթէ ոչ՝ թոյլ տուր, զի ոչ է այնքան հարկաւոր այժմ» (առ Հ. Յակոբ, Էրզրում, 10 Փետր. 1734):

(Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 24WS-6F010 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում):

Անուշ ՍԱՐԳՍՅԱՆ, Անի ԵՆՈՔՅԱՆ


Վիլյամ Սարոյանի անգնահատելի ավանդը հայ-ամերիկյան գրականության մեջ

1934 թ. հոկտեմբերին ամերիկյան գրական հորիզոնում փայլատակեց մի նոր գրական անուն՝ շնորհիվ «Երիտասարդ խիզախ մարդը շարժվող ճոճաձողի վրա» պատմվածաշարի: Վերջինիս վերնագիրն ինքնին մարգարեական նշանակություն ուներ. այդ երիտասարդ խիզախ մարդը կարծես հենց ինքը՝ Վիլյամ Սարոյանը լիներ, որ հավակնեց տեղ գրավել համաշխարհային գրականության հսկաների շարքում: Ճիշտ է, դրա համար դեռ մեծ աշխատանք ու ժամանակ էր հարկավոր, սակայն առաջին քայլն արդեն արված էր: «Երիտասարդ խիզախ մարդը շարժվող ճոճաձողի վրա» պատմվածաշարը Վիլյամ Սարոյանի առաջին ժողովածուն էր, որի շնորհիվ ամերիկյան ընթերցողը հասկացավ, որ «հայ» բառը կարող է ոչ միայն խղճահարություն ու կարեկցանք առաջացնել, այլև ի զորու է ուրախություն ու հաղթական տրամադրություն պարգևելու մարդկանց: Մինչև Վիլյամ Սարոյանի առաջին ժողովածուի հրատարակումը հայերին առնչվող և ոչ մի բան այդքան բարենպաստ տպավորություն չէր թողել ամերիկացիների վրա: Հենց մեր մեծ հայրենակցի շնորհիվ էր, որ հայերը հայտնվեցին օտարների ուշադրության կենտրոնում և այս անգամ՝ բացառապես դրական իմաստով:

Առաջին գրական հաջողությունը ոգեշնչեց Սարոյանին. նա շարունակեց ստեղծագործել մեծ եռանդով և առանց դադարների: Սարոյանն իր շուրջը համախմբեց առնվազն տասներկու ամերիկահայ գրողների: Կարկառուն արվեստագետն իր առաջին հաջողությամբ կարծես ոգեշնչեց վերջիններիս: Ամերիկաբնակ հայազգի հեղինակները գրեցին մի քանի տասնյակ գրական երկեր, որոնք արժանացան գրաքննադատների ուշադրությանը: Որոշ ամերիկահայ ստեղծագործողներ պարգևատրվեցին հայտնի մրցանակներով, օրինակ՝ Փուլիցերյան մրցանակով: Ամերիկահայ գրողների գրվածքները երբեմն դառնում էին բեսթսելերներ (գրքեր, որոնք վաճառվում են մեծ տպաքանակներով) և արժանանում ակադեմիական շրջանակների քննարկմանը: Ավելորդ չենք համարում միաժամանակ ասել, որ մեր սփյուռքահայ հայրենակիցների երկերը միշտ չէ, որ ստանում էին միանշանակ դրական գնահատականներ: Սա միանգամայն բնական է, քանի որ գեղարվեստական գրականությունը սուբյեկտիվ երևույթ է, և բավականին փոքրաթիվ են այն գրողներն ու գրական ստեղծագործությունները, որոնք միանշանակորեն դրական են ընդունվում ու գնահատվում բոլորի կողմից:

Հարկ է նշել նաև, որ մեր սփյուռքահայ հայրենակիցներն ավանդ են ներդրել ոչ միայն գրականության, այլև արվեստի, գիտության և բիզնեսի բնագավառներում: Համեմատության համար ասենք, որ ո՛չ ամերիկաբանակ լեհերը, ո՛չ հունգարացիները և ո՛չ էլ հույները նույն ժամանակաշրջանում չեն հրատարակել այնքան մեծ թվով գրքեր, որքան հայերը:

Շատերը թերևս չեն պատկերացնում, թե ի՛նչ վիթխարի ջանքեր պիտի գործադրեր երիտասարդ սփյուռքահայ գրողն ամերիկյան գրական ասպարեզում՝ լոկ մեկ խորշ գրավելու: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր գերազանց տիրապետել անգլերենին և ամերիկյան գրական ոճին, ինչպես նաև հաղթահարել ազգային ինքնության բարդ խնդիրը: Անհրաժեշտ էր նաև գտնել այնպիսի թեմաներ, որոնք կգրավեին ամերիկացիներին: Եվ սա դեռ ամենը չէ. սփյուռքահայ գրողը չպիտի կորցներ իր ազգային ինքնությունը: Նա ստիպված էր կամրջել հայկական անցյալն ամերիկյան ներկայի հետ: Համաձայնենք, որ առաջին սերնդին պատկանող ամերիկահայ գրողների համար չափազանց բարդ էր լուծել վերը նշված բոլոր խնդիրները և այսպիսով հաստատել իրենց տեղն ամերիկյան արվեստում: Միայն Սարոյանի պես իրապես շնորհալի արվեստագետն էր ունակ բավարարելու օտար միջավայրի բոլոր պահանջները և միևնույն ժամանակ չկորցնելու հայեցիությունը:



Գրողը, անկախ այն բանից, թե ինքը բնիկ ամերիկացի՞ է, թե՞ նորեկ, պիտի մշտապես հիշի, որ արվեստի ասպարեզում հաջողության կարևոր բաղադրիչն անհատականության խոր գիտակցումն է: Արվեստագետը՝ մասնավորապես գրողը, պետք է նախ և առաջ հիմնովին ճանաչի, «հայտնաբերի» ինքն իրեն: Միայն այս պարագայում է նա ունակ լիովին ինքնարտահայտվելու՝ զերծ մնալով կեղծիքից և այլոց նմանակելուց: Ինչևէ, այստեղ խոսքը չի վերաբերում այն դեպքերին, երբ գրողը կենտրոնանում է լոկ իր անձի վրա: Չկա ավելի ձանձրալի բան, քան եսակենտրոն գրողի ստեղծագործությունները ընթերցելը: Ճշմարիտ արվեստագետները, ինչպես, օրինակ, Մարկ Թվենը, Վիկտոր Հյուգոն կամ Չարլզ Դիքենսը, իրենց ողջ էությամբ ու բնավորությամբ կապված էին ոչ միայն իրենց ապրած դարաշրջանների, այլև ազգային ժառանգության յուրահատուկ մթնոլորտի հետ: Բանն այն է, որ անցյալը, իր համընդհանուր ազգային փորձությամբ հանդերձ, ներկայի մի մասն է, իսկ անհատի կերպարն առանց դրա անլիարժեք է: Սրանք այնպիսի բաներ են, որոնց մասին ամերիկացի, ֆրանսիացի կամ էլ անգլիացի գրողն առանձնապես շատ չի մտածում: Բանն այն է, որ նա գրում է իր մայրենի լեզվով, իսկ նրա ընթերցողը կրում է նույն անցյալը, ինչ ինքը: ➥ էջ 8

Խրիմյան Հայրիկ և Րաֆֆի՝ ազգային-ազատագրական պայքարի ռահվիրաները

➥ էջ 5

Վանի մեջ տղաների և օրիորդաց ուսումնարաններ բացելու նրա ջանքերը հանդիպեցին ոչ միայն հոգևոր առաջնորդի, այլև խավարամիտ աղաների դիմադրությանը: Հենց այդ ժամանակ էլ Վասպուրականի արծվի մեջ հասունացավ վարդապետ ձեռնադրվելու միտքը՝ իր գաղափարները ժողովրդի մեջ ավելի հեշտ տարածելու համար: Իր այս մտադրությունը Խրիմյանն իրագործեց 1854 թ. փետրվարի 14-ին՝ Գաբրիել արքեպիսկոպոսի կողմից ձեռնադրվելով Վարագա վանքի միաբանության վարդապետ:

Հուշագրության հաջորդ հատվածում Րաֆֆին ցավով ու ափսոսանքով նկարագրում է ժամանակի եկեղեցականության տխուր պատկերը: Վասպուրականի և Տարոնի լայնատարած նահանգներն ունեին հոծ հայ բնակչություն և փառավոր անցյալից ժառանգված հոյաշեն վանքեր, որոնք լի էին ճգնավորներով ու միաբաններով: Սակայն, ըստ Րաֆֆու, այդ հոգևորականները նվիրված էին միայն «Սաղմոսներին» ու «Նարեկին» և իրենց խցերից դուրս էին գալիս միայն վանքապատկան կալվածքների հասույթներն ու թեմապատկան շեներից տասանորդն ու պտղին հավաքելու համար: Նրանք ժողովրդի մեջ չէին լինում, «այլ ազգի արծաթն էին վայելում ու նորա համար աղոթում էին»:

Մեծանուն պատմավիպասանը գտնում է՝ Խրիմյանն առաջինը եղավ, որ իր օրինակով ցույց տվեց՝ վարդապետների պաշտոնն այն չէ, որ վանքի խորշերում ազգի հաշվին իրենց փորը պարարտացնեն: Խրիմյանը հանդես եկավ որպես ժողովրդի բարեկամ և ժողովրդական գործիչ: Միաժամանակ Խրիմյանն առաջինը եղավ աբեղաների մեջ, որ թողնելով վանքը և «Հայսմավուրք»-ի երևակայական առասպելաբանությունը՝ սկսեց եկեղեցու բեմից քարոզել ժողովրդի առօրյա կյանքի, նրա կարիքների մասին, հորդորել նրան դեպի ուսում, արհեստ և գիտություն: Խրիմյանի քարոզներն ու հրապարակային խոսքը նշանավորվում էին ջերմ, ազդու և խանդավառող բնույթով, որոնք Աստուծո տաճար էին բերում ունկնդիրների հոծ խմբեր: Նրա քարոզների մեջ չէին հիշվում եղիա մարգարեի, Թոդիկ ճգնավորի և Ալեքսիանոս միայնակյացի անունները, այլ հիշվում էին Հայկը, Արամը, Արշակունիները, ժողովրդական ու պատմական այլ հերոսներ, որոնք Խրիմյանի շնորհիվ ասես հարություն էին առնում քրիստոնեական տաճարի մեջ:

Բայց Խրիմյանը՝ որպես լուսավորական ու առաջադիմական գործիչ, շուտով բազմաթիվ թշնամիների վաստակեց, որոնց մեջ գլխավոր էին խավարամիտ հայ մեծահարուստներն ու կղերականները, և հալածական Խրիմյանը հեռացավ Վանից: Սակայն Վասպուրականի արծվի երկաթյա կամքն ու տոկունությունը երբեք չթուլացան, Խրիմյանը չընկրկեց, չհուսահատվեց, այլ անվարան շարունակեց իր ընթացքը: Նա կրկին եկավ Կ. Պոլիս, որն իր նպատակների իրագործման վայրն էր համարում: Խրիմյանն իսկույն քարոզիչ նշանակվեց Սկյուտարի Սուրբ Խաչ եկեղեցում, և իր խնայողություններով ու մի քանի սրտացավ բարերարների օժանդակությամբ Արապյանի տպարանից գնեց հնաձև տպագրական մի գործիք՝ մամուլ, և 1855 թվականից սկսեց հրատարակել «Արծուի Վասպուրական» ամսաթերթը:

Րաֆֆին Խրիմյանին համարում է հայ առաջին հոգևորական-հրապարակախոսը. «Խրիմեանն առաջինը եղաւ հայերի մէջ, որ, պատառելով եկեղեցականի նեղ-աբեղայական շրջանը, հանդէս դուրս եկաւ որպէս պուբլիցիստ»: Րաֆֆին բարձր է գնահատում նաև «Արծուի Վասպուրական» ամսաթերթը, նշում, որ իր ջերմ, գրգռողական բնույթով և մոլեռանդության հասնող ազգասիրական ու հայրենասիրական ուղղությամբ ամսաթերթն ստանում է համընդհանուր համակրություն՝ տարածվելով անսպասելի կերպով:

Բայց Խրիմյանի նպատակը Կ. Պոլսում հաստատվելն ու գործունեություն ծավալելը չէր: Ազգի բարօրության համար մարտնչող գործչի սիրտը տոչորվում էր բուն հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում տառապող ու խավարի մեջ ընդարմացած ազգակիցների համար: Հայրենիքում լուսավորություն տարածելու նպատակով Խրիմյանը Կ. Պոլսում կազմակերպում է բարեգործական ընկերություն՝ «Պաշտպանողական» անունով, և Հակոբ պատրիարքից (Հակոբոս Գ. Սերոբյան, աթոռակալել է 1839–1840 և 1848–1858 թթ.) ստանալով կոնդակ ու Բարձր Դռնից հրովարտակ, 1857 թ. իր տպարանը և «Արծուի Վասպուրական» ամսաթերթը տեղափոխում է Վարագա վանք ու այնտեղ հիմնում գիշերօթիկ դպրոց՝ «Ժառանգավորաց» անունով: Դպրոցում Խրիմյանը հավաքագրեց մոտ 30 աշակերտի՝ նպատակ ունենալով Վասպուրականի գյուղերի համար հմուտ վարժապետներ պատրաստել: Աշակերտներին կրոնագիտության հետ նաև զանազան լեզուներ, արհեստներ, մաթեմատիկա, բնական պատմություն, աշխարհագրություն, ազգային պատմություն և դպրոցական այլ առարկաներ էին դասավանդում:

Բոլորը Խրիմյանին պաշտում էին որպես կատարելատիպ: Խրիմյանն իր հեղինակությամբ ու ազդեցությամբ աշակերտների ու նրանցից վարժապետ ընտրվածների մեջ մեծ սեր ներարկեց ընթերցանության ու գիտության հանդեպ, նրա սաները կարճ ժամանակամիջոցում աներևակայելիորեն առաջադիմեցին ուսման մեջ, ինչը հաստատվում է նրանց հոդվածներով, որոնք տպագրվում էին «Արծուի Վասպուրական» ամսաթերթում:

Սակայն Կ. Պոլսից բերած Խրիմյանի նյութական միջոցներն սպառվել էին արդեն: Տպարանի և երեսուն ձրիավարժ աշակերտներով համալրված ժառանգավորաց գիշերօթիկ դպրոցի ծախսերի պատճառով նա ընկավ ծանր պարտքերի տակ: Խրիմյանի գանձարանի համալրման միակ աղբյուրը Վարագա վանքի ստացած եկամուտն էր, որը ժառանգավորաց դպրոցի օգտին ծախսելով՝ Խրիմյանն իր դեմ հարուցեց Վանի առաջնորդի և մի քանի կեղեքիչների թշնամությունը: Խռովությունն այն աստիճան բորբոքվեց, որ հակառակորդները փորձեցին կաշառված քրդերի միջոցով ազատվել Խրիմյանից: Այս մասին Րաֆֆին բերում է շատ ուշագրավ մի պատում, որը հետագայում օգտագործել են Խրիմյանի կենսագիրներն ու նրա գործունեությանն անդրադարձած հեղինակները. «Մի անգամ նա Վանքաքից ոտքով Վարագ էր գնում, երբ ճանապարհին հանդիպում է նորան մի քուրդ: Չարագործի դէմքը գունատվում է, նորա ձեռքերը սկսում են դողալ:

— Բարեկամ, ինչո՞ւ շփոթեցար դու,— հարցնում է «Հայրիկը»:

— Ես ուզում էի քեզ սպանել,— պատասխանում է:

— Ապա ինչո՞ւ չը սպանեցիր,— անխռով կերպով Խրիմեանը շարունակում է իւր խօսքը:

— Աստուած չը թողեց,— ասում է քուրդը և ընկնում է նորա ոտքը՝ ներողութիւն խնդրելու:

Այստեղ երևում է Խրիմեանի բնաւորութեան բոլոր վեհութիւնը, որ նա այդ դէպքի առիթով ոչ միայն յանդիմանութիւն չի անում իւր թշնամիներին, այլև իւր բարեկամներին անգամ անփոյթ է լինում յայտնելու»:

Տեսնելով, որ իր պարտքերն օրըստօրե ծանրանում են, թե՛ դպրոցը և թե՛ տպարանը կործանվելու վտանգի մեջ են, Խրիմյանը դրանց կառավարումը հանձնեց ուսումնարանական և տնտեսական վարչությունից կազմված երկու խորհուրդներին, իսկ ինքը դարձյալ մեկնեց Կ. Պոլիս: Այս անգամ, սակայն, նա այնքան էլ մեծ օժանդակություն չգտավ, միայն կարողացավ իր հետ Վարագա վանք բերել մեծ և փոքր մամուլներ, նաև տպարանի համար անհրաժեշտ այլ պարագաներ:

Շարունակելի

Արմաև ՄԱԼՈՅԱՆ, պ. գ. թ.

Զաքարիա Զագեցու ճառը....

↩ էջ 6

Սա իր անապական կաթով կերակրեց իր Արարչին, Որ Ինքն է կերակուր տալիս բոլոր կենդանի արարածներին: Եվ արդ, էլ ի՞նչ ասեմ կամ ի՞նչ խոսեմ. քանզի նրան վեր բարձրացած եմ համարում ոչ միայն առաքյալներից, մարգարեներից, նախահայրերից, մարտիրոսներից ու սուրբ վարդապետներից, այլև իշխանություններից ու պետություններից, սերովբեներից ու քերովբեներից և երկնային բոլոր զորություններից՝ բացառությամբ արարչական, գերազանց, աներևույթ և անստեղծ Բնության: Այլ բոլոր արարածներից՝ գերադաս և բարձր: Քանզի Տիրոջ մարմինը սրա բնությունից զգեցավ հրաշագործ Բանը, Որ [այժմ] նստած է Հոր աջ կողմում՝ քառակերպի վրա, և Նրան երկրպագում են անմարմին, հոգեղեն ու հրեղեն բյուրավոր բանակները: Սուրբ Աստվածածնի միջոցով աշխարհում ծագեց խաչը՝ իբրև զորության գավազան, մեզ համար կնիք՝ բոլորիս դեմքին, պահապան՝ մեր ելումուտին և ապավեն՝ մեզ՝ երկրպագուներիս, Աստծո՝ Փրկագործի հրաշափառ գալստյան ժամանակ: Սուրբ ու անարատ Կույսի միջոցով մահը մեռավ, և դժոխքը կործանվեց, իսկ բանսարկուն՝ մարդկանց թշնամին, լքված ու անօգնական նետվեց անդունդների ստորին սանդարամետը: Սատանան աքսորվեց իր լեգեոններ զորքերով, [այդ] փախստական օձը, որ ջրերի վրա էր, և կերակուր տրվեց հնդկացիների զորքերին, այսինքն՝ բոլոր հեթանոսներին, որոնք իշխանություն ստացան՝ օձեր ու կարիճներ կոխոտելու և թշնամու ամբողջ զորության վրա քայլելու:

Ամենօրհնյալ Աստվածածնի միջոցով բացվեց դեպի Կենաց ծառը տանող տենչալի ճանապարհը, քանզի բոցեղեն սերովբեն հետ քաշեց սուրը և մեզ համար բաց ճանապարհ պատրաստեց դեպի բաղձալի Կենաց ծառի վայելչությունը: Անարատ Կույսի միջոցով երկրի վրա կառուցվեց ու հաստատվեց Մկրտության ավազանը, և ջրի ու Հոգու վերածննդով մենք զգեստավորվեցինք Քրիստոսով և Աստծո նվիրյալ որդիներ ու ժառանգներ դառնալով՝ վերստին կարգվեցինք Քրիստոսի ժառանգակիցներ: Եվ մերկանալով՝ ցած նետեցինք հին պատկերը, որն ապականվել էր չարի խաբեությամբ, և դուրս թափեցինք վիշապի կորստաբեր չար թույնը, որը նա օձի պատրանքով ու դավաճանության միջոցով ներարկել էր մեր մեջ, և կենարար Քրիստոսի միակ պատկերը դրոշմվեց բոլորիս մեջ: Սուրբ Կույս Աստվածածնի միջոցով կուռքերի մոլորության բագիններն ու բարձունքները տապալվելով կործանվեցին, և Սուրբ Կաթողիկե եկեղեցու հիմքերը ամրանալով՝ հաստատվեցին: Եվ հրեշտակները մարդկանց հետ հոգևոր նվագներով շուրջպար են բռնում և գեղեցկապանծ խնդությամբ, միաբանված երգում են հավիտենության Արքայի օրհնության երգերը: Ամենօրհնյալ Աստվածածնի միջոցով անժամանակ Բանը, անճառելիորեն ծագելով նրա ամենօրհնյալ արգանդից, մարմին դարձավ ու բնակվեց մեր մեջ և փրկություն գործեց երկրի վրա: Գողգոթայում պատարագվելով՝ Նա բաշխեց Իր անապական մարմինն ու փրկարար արյունը՝ իբրև կերակուր ողջ տիեզերքի կենդանության համար: Որով [սուրբ Մարմնին և Արյանը] երբ հաղորդվում ենք սրբությամբ և ոչ թե սովորության համաձայն, հավատով և ոչ թե կասկածանքով, ինչպես որ քուրայի մեջ շիկացած երկաթը փոխվում է հրի՝ այլ կերպարանքի, նույնպես և մեր ապականացու մարմինն է հրաշագործվում աստվածային հրով: Որի համար էլ մարդիկ՝ հրեշտակացած, ժառանգում են ընկած հրեշտակների տեղը՝ երկնքից իջած Հացի ճաշակման միջոցով: Արդ, ո՞ր բերանը բավական կլինի պատմելու, հռչակելու սուրբ և անարատ Կույսի հոյակապ, սքանչելի ու զարդափայլ գեղեցկությունը: Եվ կամ ինչպիսի՞ երաժշտական ձայնով, ներբողով ու գովեստի խոսքերով նրան երանություն տամ և փառաբանեմ: Եդեմական դրախտ կանվանեմ նրան և նույնիսկ ավելի բարձրագույն, քան դրախտը, որից բխեց կյանքի աղբյուրը՝ Տեր Հիսուս Քրիստոսը: Եվ այդ Կյանքի աղբյուրը, չորս գետերի բաժանվելով՝ չորս Ավետարանների քարոզչությամբ, հավատով լուսավորեց աշխարհը: Նոյյան տապան կանվանեմ նրան, քանզի այն տապանը միայն մեկ տան մարդկանց պահպանեց մրրկածին ալիքներից ու ջրհեղեղի ջրերից, իսկ Աստվածածինը համայն տիեզերքի փրկության պատճառը դարձավ: Անկիզելի մորենի կանվանեմ նրան, քանզի աստվածության ճառագայթատարած լույսի սպառող ու կիզող հուրը իջնելով՝ բնակվեց նրա սուրբ արգանդում և չայրեց նրան: Որից ոչ միայն Մովսեսն առաքվեց Եգիպտոս՝ պատժելու փարավոնին և փրկելու Իսրայելը, այլև տասներկու աշակերտներն առաքվեցին տիեզերքով մեկ, հարվածելով՝ կործանեց անմարմին փարավոնին՝ իր լեգեոնների զորքերով, և համայն հեթանոսներին փրկական լեռ, որից «առանց ձեռքի անջատվեց վեմը»՝ անճառելի և մարմնացած Բանը՝ առանց սերմի: Եվ Նա կործանելով՝ խորտակեց կուռքերի մոլությունը և հիմնադրելով՝ բարձրացրեց Սուրբ Կաթողիկե եկեղեցին՝ «պարարտ ու բարձր լեռը, մեծացած լեռը», որի մեջ Աստված բնակվեց հավիտյան: Սա է հոգևոր գեղմը, որի վրա վայր իջնելով՝ անսահմանելի Բանն Աստված մարմնավորվեց, ինչպես օդը, և մշտահոս ու հավերժական ծավալմամբ բնակվելով՝ համասփյուռ տիեզերքը լցրեց կենդանի ջրով՝ մեզ՝ ծարավածներիս հագեցնելու համար:

Շարունակելի

Գրաբարից փոխադրությունը՝
Մելինե ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Վիլյամ Սարոյանի անգնահատելի ավանդը....

↩ էջ 7

Ամերիկահայ գրողների պարագայում իրավիճակը լիովին այլ է: Սփյուռքահայ արվեստագետն ստիպված է իր գրվածքներում հաշտեցնել կամ համադրել ազգային անցյալի և օտար աշխարհի տարրերը: Վստահաբար կարելի է ասել, որ Վիլյամ Սարոյանին հաջողվել է ապահովել այդ ներդաշնակումը: Մեծանուն գրողի յուրահատկությունը հենց այն է, որ նա, գրելով հայկական ազգային ժառանգության մասին, կարողանում է հետաքրքրել ամերիկացի ընթերցողներին: Սարոյանն այդպես էլ երբևէ չկորցրեց իր ինքնությունը: Կարկառուն արվեստագետի հայեցիությունը յուրահատուկ համ ու հոտ է տալիս նրա գրվածքներին, և հենց այդ հայեցիությունն է, որ երաշխավորել է նրա գրական նվաճումները: Վիլյամ Սարոյանը կարողացել է իր երկերում համադրել անգլերենը, ամերիկյան մշակույթը և հայկական ոգին: Նույն բանը կարելի է ասել մի շարք այլ ամերիկահայ հեղինակների մասին՝ Լևոն Զավեն Սյուրմելյան, Փիթեր Սուրյան և Մարջորի Հուսեփյան:

Թեև ամերիկահայ գրողները խոսում են ազգային խնդիրների մասին, սակայն նրանք դա անում են համամարդկային խնդիրների համատեքստում, ինչը, անշուշտ, չափազանց կարևոր է: Միայն այս պարագայում է, որ օտար ընթերցողը կհասկանար հայ ժողովրդին ու կընկալեր նրա խնդիրներն ու մտահոգությունները: Ամերիկահայ հեղինակների գրվածքները գրավում են ընթերցողի ուշադրությունը ոճի հստակությամբ և զգացմունքների խորությամբ: Սփյուռքահայ գրողներից շատերն իրենց գրվածքներում արտահայտում են իրենց սերը մարդկային ոգու ու կյանքի հանդեպ: Ասվածը վերաբերում է նաև Վիլյամ Սարոյանին:

Թերևս սխալված չենք լինի, եթե ասենք, որ Վիլյամ Սարոյանի երկերը շատ հեշտ է քննարկել, սակայն շատ բարդ է սպառիչ կերպով գնահատել: Սպառիչ գնահատական կարելի է տալ միայն այն գրողների երկերին, որոնք պարզունակ են ու մակերեսային: Սակայն Սարոյանի ստեղծագործությունները բնավ այդպիսին չեն: Դիտարկենք, օրինակ, մեծանուն գրողի «Քո կյանքի ժամերը» հայտնի պիեսը: Վերջինս արժանացել է բազմաթիվ մրցանակների: Սարոյանին նաև առաջարկվել է Փուլիցերյան հանրահայտ մրցանակը, բայց նա հրաժարվել է դրանից՝ ասելով, որ հարստությունը չպետք է իշխի արվեստի վրա: Սարոյանի նմանօրինակ պահվածքի մեջ կա որոշակի տրամաբանություն. ի վերջո յուրաքանչյուր ճշմարիտ արվեստագետ ստեղծագործում է նախ և առաջ իր հոգևոր բավարարվածության համար, ինչպես նաև մարդկությանն իր մտքի ու գրչի ուժով ծառայելու, մարդ արարածին և մարդկային հասարակությանն ավելի կատարյալ դարձնելու համար և ոչ թե հանուն մրցանակների ու առավել ևս դրամական պարգևների: Ինչևէ, ասվածից սխալ կլինի միանշանակորեն եզրակացնել, թե բոլոր այն գրողները, որոնք ընդունել են զանազան մրցանակներ, այնքան էլ շնորհալի չեն: Բնավ ոչ: Պարզապես որոշ տաղանդավոր արվեստագետներ զուրկ են փառասիրության զգացումից, և Վիլյամ Սարոյանը, ըստ երևույթին, հենց այդ մարդկանց թվին է պատկանում:

Հարկ է նշել, որ Վիլյամ Սարոյանը հայության համար իսկական պարծանք է, քանի որ նա առաջին ամերիկահայ հեղինակն էր, որ հասավ գրական հռչակի, և առաջինն էր, որ ցույց տվեց օտարազգի ընթերցողներին, որ, այսպես կոչված, «սովալլուկ հայերը» հոգեպես շատ ավելի հարուստ են, քան իրենք: Սարոյանն այնքան ազդեցիկ ձևով էր խոսում մարդկանց հետ, որ նրանց համար դժվար էր նրա երկերը քննել քննադատական լույսի ներքո: Սարոյանի ստեղծագործությունների կենսունակության և հարատևության առեղծվածը հասկանալու համար անհրաժեշտ է մի քանի անգամ ընթերցել դրանք: Ուշագրավ է, որ Սարոյանը մինչև հիսուն տարեկանը հրատարակել է կարճ պատմվածքների տասներեք ժողովածու, տասներկու ամբողջական պիես, ութ վեպ և երեք ժողովածու, որոնցում ընդգրկված են տարբեր ժանրի գործեր:

Գրաքննադատները հենց սկզբից ընդունեցին, որ Վիլյամ Սարոյանն իրոք ինքնատիպ հեղինակ է, սակայն եղել են նաև բացասական գնահատականներ: Որոշ քննադատներ փառաբանում էին մեր հայրենակցին՝ բնութագրելով նրան իբրև «ամերիկյան գրականության ճերմակ հույս»: Մեկ այլ քննադատ Սարոյանին անվանել է «գրական գործի երկնային հայր»: Ոմանք կասկածում էին, թե ամերիկահայ գրողն իսկապե՞ս այնքան մեծ հավատով է լցված եղել, այսպես կոչված, «գեղեցիկ մարդկանց» հանդեպ, ինչպես նա դա ներկայացնում է իր երկերում: Այլ կերպ ասած՝ Սարոյանին մեղադրում են ոչ այնքան անկեղծ լինելու մեջ: Որոշ քննադատներ չկարողացան հասկանալ ու գնահատել մեծ գրողի հազվագյուտ հումորը, այն, որ նա կարողանում էր պոետական լույսի ներքո տեսնել կյանքի ամենահասարակ հայեցակետերը, ինչպես նաև նրա կենսախնդությունը և հրաշալի ունակությունը՝ անցնելու մեկ տրամադրությունից մի այլ տրամադրության:

Վիլյամ Սարոյանն ստեղծեց մի նոր մթնոլորտ իր անհատականության շնորհիվ: Գրողի արևմտյան բնական կոպտությունը, որն ավելի շեշտված դարձավ, երբ նա հասավ գրական հռչակի, լիակատար ազատականությունը՝ իբրև արվեստագետ ու մարդ, ինչպես նաև նրա ունակությունը՝ արժևորելու կյանքի ամենապարզ ու հասարակ պարգևները, դրական են գնահատել քննադատները: Վերը նշված որակներն իսկապես նոր էին և գրավիչ:

Սարոյանի երկերը լուրջ քննադատության առարկա չդարձան: Ինչևէ, սա չի նշանակում, թե նրա բոլոր ստեղծագործությունները նույն մակարդակի վրա են: Իհարկե, ո՛չ: Նրա առավել գնահատելի գործերից են «Իմ սիրտը լեռներում է», «Գեղեցիկ մարդիկ» պիեսները և «Իմ անունն Արամ է» պատմվածքների շարքը: Երբեմն Սարոյանի գրվածքներում զգացվում է որոշակի անտարբերություն, ինչպես, օրինակ, «Ես հանում եմ քո առաջ գլխարկս, իմ սեր» երկում: Երբեմն էլ Սարոյանի գրական փորձերը կատարելապես ձախողվում էին: Սակայն այս վերջին իրողությունը մեծ գրողին կարծես այնքան էլ չէր հուզում: Սարոյանն առհասարակ ազատ ոճի մարդ էր և պատկերացում չուներ կարգ ու կանոնի մասին, սակայն սրանք գրողի անհատականության բաղադրիչներն էին, և նրան հաջողվում է դրանցից օգուտ քաղել:

Սարոյանը երբեմն զգալ է տալիս ընթերցողին, որ ինքը դժգոհ է իր գրական ոճից: Մենք դա հասկանում ենք այն ժամանակ, երբ նա անընդհատ անցումներ է կատարում մեկ ժանրից մյուսին. գրում է կարճ պատմվածքներ, հետո անցում կատարում դեպի պիեսներ, իսկ այնուհետև՝ վեպեր:

«Երիտասարդ խիզախ մարդը շարժվող ծոճաձողի վրա» ժողովածուի նախաբանում Սարոյանն ասում է, որ իր առաջին գրական կանոնը ոչ մի կանոնի ուշադրություն չդարձնելն է, իսկ երկրորդը՝ նախորդ բոլոր գրողներին մոռանալը՝ ներառյալ Էդգար Ալան Պոյին և Օ. Հենրիին:

Շարունակելի

Տիգրան ՄԱԼՈՒՄՅԱՆ, բ. գ. թ.

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցե՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 15.07.2026 թ.
Տպաքանակը՝ 915